ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1884. ՆՈՅ. և ԴԵԿ. №№ 9—10 Ա. ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երես.

1. Ուսուցչի պատրաստութիւն իւր պաշտօնի համար 307
2. Կատկարանի պատմածների համակեղբոնացումն 311
3. Դաստիարակութեան նպատակը 316
4. Ախալցխայի Հոգ. դպր. մանկավարժական խորհրդի արձանագրութենից քաղուած . 321
5. Ախալցխայի և Ախալքալաքի վիճակի Հայ առաքելական քահանաներին 337
6. Ուսուցիչ 353
7. Բաղդատիսսութիւն կամ բարբարոսութիւն 354
8. Ցիշատակարան 359
9. Պատասխաններ խմբագրութեան կողմից. 367
10. Մանուցմունք 2, 3 և 4 երեսներում։

ԹԻՖԼԻՍ

ՑՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ ՏՊԱՐԱՆ

1884

ԱՂԲԻՒՐ

Պատկերազարդ միամեայ հանդէսը (երեխաների և դաստիարակների համար) առաջիկայ 1885 թուականին կը-հրատարակվի միևնոյն գեղեցիկ միևնոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ։

Տարեկան գինն է 3 ռ., կիսամեայ 2 ռ.։

Հասցէն. Тифлисъ. Редакціи „Агнюръ“.

Խմբագիր-Հրատ. Տ. Նազարեան։

ԲՈՒԲԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Պատկերազարդ հրատարակութիւն ամիսը երկու անգամ։ Տարեկան գինն է 4 ռ. Ռուսիայում։ Հասցէն. Կ. Պոլիս. Սուլթան Համամ, թիւ 14։

Հրատարակիչներ. Ն. Կ. Պէրպէրեան և Ս. Տէօվլէթեան։

ՄՇԱԿ

Գրականական-քաղաքական լրագիր. տարեկան գինը 10 ր.։ Հասցէն. Тифлисъ. Ред. „Мшакъ“.

Խմբ.-Հրատ. Գ. Աբծրունի։

ԱՐՁԱԳԱՆՔ

Քաղաքական-գրականական շաբաթաթերթ։ Ներքին գործերի նախարարի կարգադրութեամբ՝ ամիս զգաստ մնալուց յետոյ, վերսին կոչվի հրատարակվի։ առաջիկայ 1885 թուականի յունվարից։ Տարեկ[illegible] սամեայ 3 ռ.։ 1885 թուականի տա[illegible] սեպտեմբերին կոստանդ 30 տպագ[illegible] կացած մի մեծատառոր գեղեգ գրակ[illegible] գակութեամբ։ Հասցէն. Тифлисъ.

Խմբ.-Հրատարակիչ[illegible]

ԱՐԵՒԵ

Օրագիր քաղաքական և ազգայ[illegible] 56 ֆրանկ, կէս տարվան 28 ֆրան[illegible] Էալաթիա, Նորատունկեան խան։

595

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Իւրաքանչիւր տեսրը 2 թերթ։ Տարին 10 տեսր։ Տարեկան գինը 3 ման.

Հաստիչ. Ахалцихъ.
Редакціи МАНКАВАРЖА-ЮЦЪ.

1884. ՆՈՅ. և ԴԵԿ. №№ 9 — 10 Ա. ՏԱՐԻ

Faisons notre devoir, le reste est vanité.

(Մենք մեր պարտքը կատարենք, մնացածն ունայնութիւն է։)

ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԻՐ ՊԱՇՏՕՆԻ ՀԱՄԱՐ։

Ուսուցչական պաշտօնի դժուար պարտքերը կատարելու համար, որոնց մասին խօսեցինք անցեալ տետրում, բաւական չէ միայն կոչումն ունենալ, հարկաւոր է, որ ուսուցչացուն պատրաստված լինի մասնագիտական ուսմամբ։ Պատրաստութիւնը օգնումէ կոչման և երբեմն նաև պարթեցնումէ կոչումն հոգու մէջ, որտեղ ծածկված էր արդէն նորա սերմը։

Սակայն կարծես այս չեն հասկանում այն երիտասարդները մեծագոյն մասը, որոնք նուիրումեն իրանց սկզբնական կրթութեանը։ Նոքա հասկանումեն, որ ամեն պարապմունքի համար հարկա-

ւոր է մի տեսակ աշակերտութիւն, արուեստաւորն օրինակ չէ կարող աշխատել փայտի կամ երկաթի վերա առանց երկար և դժուար աշակերտութեան, բայց դեռաբոյս մտքերը մշակելու արհեստը այնքան հեշտ է թուում նոցա, որ նոքա կարծումեն թէ կարող են առաջադիմել առանց այն սովորած լինելու։ Երեխասարդը միջնակարգ դպրոցի մի վիկայականն ձեռքն առած մտնումէ դպրոց, որտեղ ամեն բան նորա համար նոր է։ Նա իրան ընդունակ է համարում դպրոցը յաջողութեամբ կառավարելու։ Երէկեան աշակերտը այսօր ուսուցիչ է։ Սակայն ինչ է նշանակում նորա վիկայականը։ Այն որ նա յաջող սովորած է իբրև աշակերտ։ Սորանից միթէ կմակաբերվի, թէ նա յաջողակ կլինի իբրև ուսուցիչ։ Միթէ նա չէ մտնում նոր ասպարէզ, բոլորովին տարբեր և բոլորովին այլատեսակ փշալի քանթէ իւր հին ասպարէզը։ Հաւատումեմ, որ նա լաւ գիտէ բոլորն ինչ որ նա պիտի սովորեցնէ, նա մինչև անգամ առաւել ևս շատ գիտէ։ Կարելի է միթէ սորանից հետևեցնել թէ նա ընդունակ է սովորեցնելու։ Ի հարկէ ոչ։ Ամենաընդունակ ուսուցիչը նա չէ, ով ամենաշատ տեղեկութիւնները ունի, այլ նա է ով գիտէ ամենալաւ կերպով աւանդել մանուկներին իրանց կարևոր տեղեկութիւնները։

Ուսուցանելու այն տաղանդը, որը բաւական կլինէր, երբ ուսուցիչը մի մանուկի հետ է պարապում, անբաւական է հասարակական ուսուցիչ լինելու համար։ Այս տաղանդը նորա համար անօգուտ է դառնում, եթէ սորա հետ չունի նա մի

ուրիշ առաւել հաղուագիւտ տաղանդ այն է մանուկներին դաստիարակելու տաղանդ, այսինքն նոցա կամքի վերա իշխելու և նոցա կամքը դէպի բարին ուղղելու տաղանդ։ Շատ անգամ տեսնումենք նշանաւոր խելքի տէր ուսուցիչներին, որոնք ամենահասարակ աշակերտներից խափված են լինում։ Շատ անգամ տեսնումենք քաջ և փորձված մարդիկ, հին զինուորականներ, որ ի զուր են գործ դնում ամեն միջոցներ կարգապահութիւն սովորեցնելու թեթևամիտ և կամակատար մանուկներին։ Շատ անգամ տեսնումենք գիտուն ուսուցիչներին, որոնց ծաղրումեն անզուսպ տգէտ աշակերտները, որոնք ծիծաղումեն նոցա աշխատութիւնների վերա։ Պատճառն միմիայն այն է, որ ոչինչ չէ կարող փոխարինել մանուկներին կրթելու տաղանդը, որի սերմը տալիս է նոյն ինքն բնութիւնը և որը կարող է զարգանալ միմիայն մտածութեամբ և փորձառութեամբ։

Հարկաւոր չէ կարծել թէ այս կարևոր պատրաստութիւնը շատ դժուար է. ծխական ուսուցչի պարտքերը պահանջումեն միայն քանի մի թանկագին, բայց պարզ ընդունակութիւններ, որոնց աստուածային նախախնամութիւնը տալիս է նորան, ով լրջմտաբար աշխատումէ նոցա ձեռք բերելու։ Բայց և այնպէս այս պաշտօնի դժուարութիւնները շատ աւելացան քանի մի տարիներից ի վեր. ուստի բարեխիղճ պատրաստութիւնը առաւել անհրաժեշտ դարձաւ քան թէ երբևիցէ։

Շատ ժամանակ չէ անցել այն օրերից, երբ ուսուցիչներին այն յարգանքը չէին մատուցանում,

ինչ որ վայել է նոցա։ Այս ասելով պէտք չէ հասկանալ թէ միւս ծայրայեղութեամբ շռայլելու է նոցա շողոքորթութիւնները և նոցա մոլորեցնել ազդելով նոցա իրանց մեծ նշանակութեան մասին բարձր գաղափար։

Ուսուցիչը պիտի լմանայ մնալ այս երկու ծայրայեղութիւնների մէջ տեղ. առանց ստորին դրութիւն յանձն առնելու, մերժելու է նոյնպէս կոպիտ ամբարտաւանութիւն։ Հարկաւոր է լինել բարի ուսուցիչ, միշտ խոհեմ և համեստ։ Այլև մի կարծէք թէ մանուկների մէջ կգտնէք այն մեքենայական հնազանդութիւնը, որ երբեմն մարմնական անիրաւ պատիժների շնորհով այնքան հեշտացնում էր կարգապահութիւն դպրոցների մէջ։ Մանուկներն ընդհանրապէս տարածված անկախութեան ոգու ազդեցութեան ներքոյ են այսօր մեր մէջ ևս մասամբ։ Միւս կողմից նոքա առաւել զգայուն չեն դարձել դէպի լաւ վարմունքը, չունին այնքան երկիւղ և լաւ չեն կրթվում ընտանիքի մէջ։ Իսկ ընտանիքներն առաւել պահանջող են դարձել։ Աշխատումեն ներքոյ լինել դէպի մանուկի անիրաւութիւններ, լսումեն նորա անիրաւ գանգատները, նորա կուսակից են դառնում այն խստութիւնների և պահանջների վերաբերմամբ, որոնց մասին ընդհակառակն ընտանիքները պիտի օգնէին և օրհնէին ուսուցիչներին։ Ուրեմն ուսուցիչը մի կողմից պիտի դիմադրէ այն բռնակալական ձգտմունքին, որոնց կամենումեն նորան ենթարկել և իրանց պահանջները կատարել տալ, միւս կողմից պիտի լմանայ պահպանել այն անձ-

ների բարեկամութիւնը, որոնց աղդեցութիւնը չէ ընդունում նա։ Նա պիտի կառավարվել իմանայ յաջողութիւն գտնելու համար։

Ուրեմն մեծ անխոհեմութիւն չի լինի արդէօք մտնել այսքան փշալի ասպարէզը առանց նորա համար վայելչապէս պատրաստված լինելու։

ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԻ ՀԱՄԱԿԵԴՐՕՆԱ-ՑՈՒՄՆ։

Հարկաւոր է ընդարձակօրէն և բազմակողմանի կերպով հասկանալ համակեդրօնացումն, երբ յարմարեցնումենք նորան կտակարանի պատմածներին։ Համակեդրօնացումն ոչ թէ պատմածների ընդարձակումն է լոկ խօսքերով (փրազներով) և աւելորդ բառերով, այլ պատմածների նոյն ինքն բովանդակութեան ընդարձակումն է, նորանոր մանրամասներ, նոր տարրեր մուծանելով դասի մէջ։ Առաւել լաւ հասկանալու համար կներկայացնեմ օրինակ, որից կարելի է տեսնել, որ ուսած շատ կրօնուսոյցներն անգամ ճիշդ չեն հասկանում համակեդրօնական սիստէմ։ Առաջին տարին սովորաբար հաղորդումեն բոլոր պատմածը համառօտապէս, երկրորդ տարին միևնոյնը աւելի են ընդարձակում միայն բառերով։ Օրինակ Քամի վարմունքը Նոյի հետ առաջին տարին այսպէս են աւանդում.

«Ցասլանից դուրս գալուց յետոյ Նոյ տնկեց խա-

ղողի որթ։ Միանգամ խմելով խաղողի հիւթը, Նոյ արբեց և պառկած էր մերկ։ Քամը ծիծաղեց իւր հօր վերա և կանչեց իւր եղբայրներին, որ նոքա ևս նոյնն անեն, բայց Սեմ և Յաբէթը վերցրին շորը և ծածկեցին իրանց հօրը։ Նոյ անիծեց Քամին և օրհնեց Սեմին և Յաբէթին։»

Երկրորդ դասընթացում սոյն պատմածն այս կերպով են աւանդում.

«Նոյ դուրս եկաւ տապանից և սկսեց երկիր մշակել։ Այնտեղ, որտեղ բնակումէր Նոյը ջրհեղեղից յետոյ, աճումէր խաղողի որթը։ Նոյ շինեց այգեստան։ Նա չգիտէր, որ խաղողի հիւթը, երբ կթթուի, կարբեցնէ, գինի կդառնայ։ Երբ խաղողը հասաւ, Նոյ քամեց նորանից հիւթ, շատ խմեց և արբեցաւ։ Այս դրութեամբ պառկած էր նա իւր վրանում, առանց ծածկվելու։ Քամը մտաւ վրանը և տեսնելով իւր հօրը մերկ, սկսեց ծիծաղել նորա վերա։ Գնաց իւր եղբայրների մօտ և ծիծաղելով պատմումէր նոցա հօր մասին։ Բայց Սեմ և Յաբէթը բարի զաւակներ էին, նոքա սիրումէին իրանց հօրը, ուստի յօժար չէին նոքա լսել Քամի կատակները հօր մասին։ Նոքա նոյն ժամայն մտան հօր վրանը և մէջքը դարձնելով դէպի հայրը, ծածկեցին նորան վերարկուով։ Երբ Նոյ զարթեց և իմացաւ Քամի վարմունքը, նա դատապարտեց անարգ որդուն, անիծեց նորան։ Իսկ միւս որդիներին, Սեմին և Յաբէթին, Նոյ օրհնեց։»

Այս երկոքեան պատմածները համակեդրոնաբար չեն յօրինված և երկրորդը գանագանվումէ առաջնից նորանով միայն, որ առաւել շատ խոսքե-

ռով է հաղորդում նոյնը, ինչ որ պարունակվումէ առաջին պատմածում։ Առաջին պատմածի պարունակութիւնն իմանալուց յետոյ, մանուկները ոչինչ նոր բան իմանալու չեն երկրորդից։ Ի՞նչ փոյթ, ինչ օգուտ, որ նոքա նոյնը ուրիշ խօսքերով լսեցին։ Միևնոյն է թէ ուսուցիչը փոխվեցաւ. մին մի ոճով էր պատմում, միւսը միւս ոճով։ Այլև պէտք չէ համակեդրօնացումն այնպէս հասկանալ երբև թէ սրբազան պատմութեան իւրաքանչիւր պատմածը մինչև անգամ 10—15 տողից բաղկացած փոքրիկ պատմածները, յարմար են համակեդրօնացման համար և կարևոր է անշուշտ երեք ձևով աւանդել։ Փոքրիկ պատմածները ամենևին պէտք չունին համակեդրօնացման, այլ նոցա սովորելու է ամբողջապէս, նայելով երանց կարևորութեան և հեշտութեան աստիճանին, առաջին, երկրորդ կամ երրորդ տարին։ Անհնարին է իւրաքանչիւր պատմածը երեք ձևով սովորեցնել։ Սրբազան պատմութեան ամեն դասագրքերն 150 պատմածից երբէք պակաս չեն պարունակում, ոչինչ հնար չկայ նոցա մի տարում սովորել, թէպէտև ամենահամառօտ ձևով։ Եւ եթէ ոքմին կարօղանար այս անել, հասնելու չէր ոչինչ մանկավարժական նպատակներին։ Վերջ ի վերջոյ ամբողջ տարվան հետևանքն այն կլինէր միայն, որ մանուկները կիմանային ոչ թէ պատմել երօղութիւններ, այլ միայն թուել նոցա։

Կրօնի դասատուութեան մէջ գլխաւորագոյն և կարևորագոյն խնդիրն այն է, որ մանուկները աստիճանաբար սովորելով կրօնական ճշմարտու-

թիւնները, հետզհետէ ընդարձակվէր նոցա մտաւորական կրօնական տեսակէտը, և հետզհետէ կրթվէր նոցա բարոյական զգացումն, — մի խօսքով որ մանուկները զարգանային և հզօրանային հոգևոր կեանքի մէջ։ Համակեդրոնական սիստէմը է նկատի ունի այսպիսի կանոնաւոր զարգացումն միայն։ Բայց այսպիսի զարգացմանը կարելի է հասնել ոչ միայն այն պատմածներով, որոնք զանազան դասընթացներում աստիճանաբար լրացրած բովանդակութեամբ են աւանդվում, այլև միանգամ հաղորդված փոքրիկ պատմածներով։ Մինչևնոյն ժամանակ պէտք չէ առաջին տարին միայն փոքրիկ պատմածներով զբաղեցնել մանուկներին, որովհետև օգուտ չեն բերի և այսպիսի դասընթացը ճանձրալի կլինի մանուկների համար։

Համակեդրոնական սիստէմը կտակարանների պատմածներին յարմարեցնելու խնդիրը շատ վաղուց վճռած է օտարերկրեայ մանկավարժական գրականութեան մէջ։ Ո՛րքան ցանկալի կլինէր, եթէ մեր կրօնուսոյցները կարօղանային դիմել և օգուտ քաղել եվրոպական ազգերի օրինակներից, որոնց մէջ հաւատը կենդանի է, որոնց կեանքի կանոնագիրքը Աւետարանն է, և որոնց կրօնը միացած է ամենօրեայ գործերի հետ։ Այստեղ կյիշատակեմ սրբազան պատմութեան մի դասագիրք, որն ունեցած է եվրոպայում 60 տպագրութիւն։ Եվրոպայի մէջ, որտեղ գրեթէ իւրաքանչիւր կրօնուսոյցն իւր դասագիրքն է յօրինում, վերոյիշված թիւը չափազանց նշանաւոր է։ Այս գրքից (երանի թէ մի օր կարօղանայինք հայկական թարգմա-

նութեամբ նուիրել հայազն մանուկներին) պարզ պիտի լմացվի, նախ թէ ինչ հասկանալու է սուրբ գրքի պատմածների համակերդբնացումն ասելով և ապա թէ ինչպէս աւանդելու է սոյն պատմածները անչափահաս մանուկներին։ Այս գրքում իւրաքանչիւր պատմածի նոր կտորների տողերի սկզբում նշաններ կան, որոնք ցոյց են տալիս թէ ինչ կարգին հետևելու է կրօնի դասատուութեան մէջ։ Դասագրքի առաջաբանի մէջ բացատրված է, որ նշան չունեցող կտորները նշանակված են 6-ից 8 տարեկան մանուկների համար։ Մի աստղանիշ (*) ունեցող կտորները նշանակված են 8-ից 10 տարեկան մանուկների համար։ Երկու աստղանիշ (**) ունեցող կտորները նշանակված են 10-ից 12 տարեկան մանուկների համար։ Վերջապէս խաչ (†) ունեցող կտորները նշանակված են 12 տարուց վեր հասակի մանուկներին, Իւրաքանչիւր յետագայ դասընթացն ուսումնասիրելիս կրկնվումէ առաջագոյն սովորածը։ Դասատուութիւնը պատկերներով է լինում։ Դասագրքի մէջ 113 պատկերներ կան։

Դասագիրքը, որ գերմաներէնից թարգմանված է Ֆրանսերէն, այս վերնագիրն ունի. „Histoire Biblique de l'Ancien et du Nouveau Testament, ornée de 113 gravures sur bois et d'une carte de la Terre Sainte, par le d-r J. Schuster. Ouvrage hororé de Sa Sainteté le pape Pie IX, traduit sur la 58-e édition allemande par l'abbé M. B. Couissinier, ancien professeur d'Histoire au petit séminaire et collège catholique de Marseille. Avec approbation de Mgr l'évêque de Marseille.„

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ։

(Ֆրանսերէնից թարգմանված այս յօդուածը ԺԸ-ԴԷՎ քաղաքի ազգային լուսաւորութեան վարչութեան քարտուղարի հեղինակութիւն է, որ շատ իմաստալի մտքեր է բովանդակում)։ Խմբ.

Մի օր Ժ. Ժ. Ռուսսոյի մօտ խօսումէին դաստիարակութեան վերա։ «Կրթութեան նպատակը, ասումէր մի մայր, տղաների չար գործելը արգելելն է»։—Ոչ, պատասխանումէ Ռուսսոն, կրթութեան նպատակն է սովորեցնել երեխային չար գործելը չկամենալ, այնպէս որ ամենևին պէտք չլինի նորան արգելելու այդ։

Թէ բարոյական և թէ ուրիշ բոլոր տեսակէտերից ուսուցիչը պէտք է աւելի ջանք գործ դնէ երեխաների մէջ մտցնելու կամք կամ հնարաւորութիւն աւելի լաւ լինելու և իրանց սեփական նկատողութեամբ սովորելու, քանթէ ուսուցչից ուսանելու։ Լոկը և Մոնտէյնն էլ նոյն կարծիքի են։

Ամենայն առաջադիմութիւնների նպատակը, ասումէ Ժիւլ Սիմոնը, մարդկային կամքն ու միտքն է։ Զօրացնել կամքը, զարգացնել միտքը—ահա իսկապէս առաջադիմութիւն անելը և սա աւելի հնարաւոր, հեշտ և անհրաժեշտ կդարձնէ ամեն յետագայ առաջադիմութիւնները»։ Մի փոքր յետոյ շարունակումէ. «Մտաւոր հարստութիւնը ունեցողին միւս բոլոր հարստութիւններից աւելի բարեբաղդութիւն է բերում։ Առաքինութենից յետոյ մտաւոր հարստութիւնը առաջին բարիքն է և միւս բոլոր բարիքների աղբիւրը»։

Մանկավարժները անհրաժեշտ կարևոր են համարում ձեռք բերած տեղեկութիւնները հիմնել կրթական, աստիճանաւոր, որոշ համակարգութեան (սիստէմի) վերա, որը պիտի զարգացնէ հոգու և սրտի ունակութիւնները մտքի ընդունակութիւնների հետ միասին։ Երեխային, բացի մարմնաւոր ոյժից, իմացական հարստութիւն, մտքի անկախութիւն և բնաւորութեան հաստատութիւն տալը նշանակումէ մի եռանդուն աշխատող, մի քաղաքացի, մի մարդ պատրաստել։ Ուսումն, առանց դաստիարակութեան, անհոգի մարմին է. դա կլինի միայն դատողութեան առաջին փաստորդները, որից չէ կարելի եզրակացութիւն հանել։ Այս պայմանների մէջ գործը անկատար կամ ապարդիւն կմնայ և երեխայի ընութիւնը այնքան արդասաւոր պիտի լինի, որ չարիքը կամ չարիքի կամեցողութիւնը երբէք չկարողանայ յայտնվել նորա մէջ։

Ուսման դաստիարակական մասը անհոգ թողնելը նշանակումէ վնասել անհատին, ընտանիքին և ազգին։

Այն անձը, որի մտաւոր ընդունակութիւնները հաւասարակշռված չեն բաւարար բարոյական կրթութեամբ, որի հոգին վատ ուղղութիւն է ստացած, հնազանդումէ իւր բնազդմունքի բռնութեանը և անկարգ ախտերին։ Անտարբերութիւն դէպի առաքինութիւնը, մեծ ինքնահաւանութիւն, մեծամտութիւն, որը ստիպումէ ամեն բան դատել, սառնութիւն, ծուլութիւն, անչափաւորութիւն— ահա սխալ և կեղծ կրթութեան պտուղները։ «Մի

մանուկի կրթութեան համար, ամերիկացի Զանինգ փիլիսոփան ասել է, աւելի իմաստութիւն, աւելի խորին մտածողութիւն է հարկաւոր, քանիցէ մի տէրութեան կառավարութեան համար»։ Վատ կրթութիւն ստացած մանուկն երբեք չէ կարող, ոչ ոքի մտքում, ստեղծել լաւ գաւակի, անձնատուր եղբօր և անսպարսաւ հօր գաղափար։ Քրնքշութեան, սէրի զգացմունքը, որոնք կարծես բընական ապէս մարդի սրտի մէջ խոր տպաւորված են, զեղծված չէն միթէ եսականութեամբ, որը անշուշտ առաջ է գալիս կրթութեան պակասութենից կամ թերութենից։ Հեզանդութիւնը, որդիական երկիւղածութիւնը, ծերերից պատկառումն, եղբայրական հիմերաշխաւորութեան ոգին անհետանումեն ամենանեղ առանձնականութեան, ամենակոպիտ հպարտութեան տեղի տալու համար։

Ընտանեկան կեանքը չկայ կրթութենից զրկված անձի համար, որովհետև նա պահանջումէ համակրութեան շատ յատկութիւններ, անձնուրացութիւն, եսականութեան անհետացումն ընդհանուր բարիքների համար, և այս յատկութիւնները զարգանումեն միայն մտքի, սրտի և կամքի համանուագ վարժութիւններով։

Ընտանիք ասելով հասկանալու է հասարակութիւն։ Կարդացէք պատմութիւնը, ուսումնասիրեցէք ներկայ աշխարհը։ Առանձնականութիւնը, անձների կամ կուսակցութիւնների ինքնասիրութիւնը վատ կրթված հասարակութիւնների նշաններ են, այսինքն նոցա, որոնց մէջ անծանօթ է ընտանեկան կեանքը, ուր կրթութիւնը, վարձ-

կանի գործ դառնալով, մատակարարվումէ այնպիսի հաստատութիւնների մէջ, որոնց նպատակն է անհատական հայեացքներ ընդհանրացնելն կամ շուտափոյթ հարստութիւն ձեռք բերելը։ Այսպիսի անպիտան և շահաւէտ հայեացքներ և գործողութիւններ առաջացնումեն տարաձայնութիւններ, քաղաքական անհաշտութիւններ և քաղաքացիների փոխադարձ կռիւներ։

«Ազգի բարեբաղդութիւնը, գրումէր Լիւտէրը Գերմանիայի վարչական պաշտօնեաներին, կախում չունի միայն եկամուտների առատութենից, պատուարների ամրութենից, շինութիւնների գեղեցկութենից։ Քաղաքավարի, կրթված, պատուաւոր, իմաստուն քաղաքացիներ ունենալ—ահա ազգի առաջին օգուտը, նորա փրկութիւնը և նորա ոյժը»։

«Կրթեցէք ժողովուրդը» այս էր Վիլիամ Պէնի տուած խորհուրդը Ամերիկայի Պէնսիլվանիա նահանգին, որի հիմնադիր էր ինքն, և միևնոյն խորհուրդը կրկնումէին անդադար մեծ հասարակապետութեան (Ամերիկայի) քաղաքացիներին նորա ամենահռչակաւոր մարդիկ։ Եւ Միացած նահանգները կրթումեն ժողովրդին ընդարձակ ժողովրդապետական հոգով, առանց ազանդաւոր կամ աննեբօղամիտ վարդապետութեան և նոցա կրթութիւնը հիմնված է այն բարոյական ճշմարտութիւնների վերա, որոնք կրթութեան խարիսխն են։ Միտքը և սրտի զգացմունքը զարգացնել—այս է ահա թէ մեծ հասարակապետութեան, թէ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Զվիցերայի,

Նիդերլանդիայի և Սկանդինավիայի կրթութեան նպատակը: «Մարդը այն է, ինչ որ է նորա սիրտը, ասումէ Ֆրանցիսկեան կարգի Հ. Գրիգոր Ծիրառը, մարդս ներգործումէ այնպէս ինչպէս սիրումէ և սիրումէ այնպէս, ինչպէս մտածումէ»:

Միտք, զգացմունք, կամք—ահա հոգու երբորդութիւնը. աստուածային զօրութեան այս յայտնութիւնները, յարմարեցրած լինելով Ճշմարտութեանը, բարութեանը և գեղեցկութեանը, արդեօք ամենայն բարերաղդութեան աղբիւրը, ընտանիքի և ընկերութիւնների պահապանները չէ՞ն մնիմէ: Էյբնիցը այդ լաւ էր հասկանում, երբ բացագանչումէր թէ «Եթէ կերպարանափոխէին կրթութիւնը, ամբողջ մարդկային ազգը կվերանորոգվէր»:

Ասվումէ թէ ընտանիքը սկսումէ կրթութիւնը և հասարակութիւնը վերջացնումէ: Մենք երբէք մի այդպիսի բացարձակ դատողութիւն չենք հաստատում, թէև դա մի Ճշմարիտ նկատողութիւն է պարունակում: Իհարկէ, սկզբնական բարոյական ուղղութիւն տալը յատկապէս ընտանիքին է վերաբերվում. հասնումէ ուսումնարան յաՃախելու հասակը, և այս մեծ պարտքը բաժանված է ուսուցչի հետ, բայց ոչ երբէք ծնողների իշխանութենից դուրս, որոնց բնական ազդեցութիւնը շարունակվումէ ընտանեկան շրջանում: Այնուհետև մանուկի կրթութեան ընդհանուր գործի մէջ ուսուցչին ընկած բաժինը գնահատելու համար, անհրաժեշտ է ուսումնասիրել այն, ինչ որ պիտի լինի նա Ֆիզիքական, մտաւոր և բարոյական տեսակէտերից,

և յետոյ ծրագրելու է նորա դաստիարակական պաշտօնը դպրոցում և դպրոցից դուրս։

Կ. Մ.

ԱԽԱԼՑԽԱՑԻ ՀՈԳ. ԴՊՐ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵՆԻՑ ՔԱՂՈՒԱԾ։

Դպրոցների տեսուչը խնդրեց ուսուցիչներից լսել այն տպաւորութիւնները, որ նա ստացել է ուսուցիչների դասերին ներկայ լինելուց։

«Արդէն երկու ամիս է, որ ես անդադար ներկայ եմ լինում դպրոցներում աւանդված դասերին։ Թէպէտ շատ երևոյթների մասին խօսել ենք արդէն թէ մեր խորհուրդներում և թէ մասնաւորապէս, բայց դուցէ աւելորդ չլինի իմ ստացած տպաւորութիւններիս ամփոփումն, որ ահա կամենումեմ կարդալ ձեզ։ Եւ կրկնելով ոչ թէ կամենումեմ յանդիմանել ոք մին, մանաւանդ որ դիտողութիւնները ընդհանուր են և շատ սակաւ եմ մասնաւորել, այլ միայն փորձառութենից օգուտ քաղելու նպատակով։ Տեսնումեմ որ ձեզանից ևս շատերը ցանկանումեն գործ կատարել։ Ինչ որ համաձայն կդտնէք, երևի կընդունէք և կշահվիք։ Իսկ եթէ որևիցէ բանում կապացուցանէք իմ սխալված լինելս, ճշմարտութիւնն առաւել կպարզվի, ուրեմն դարձեալ օգուտ կունենանք։

Շատ անգամ թէև մեղադրումենք աշակերտներին, բայց մենք ևս մեղադրելի ենք շատ բանում։

1) Ուսուցիչը պարապումէ մի աշակերտի հետ, մո-

ռանումէ որ ամբողջ դասարանն է նորա առաջ։ Մինին օրինակ կարդացնումէ, միւսներից ոմն պառկած է գրում, ոմն կանգնած, ոմն գլուխը սեղանի վերա դրած, ոմն տախտակը գգված և այլն։ Ուսուցիչը շատ անգամ դարձնումէ մէջքը աշակերտներին, աշակերտները շատ անգամ աշխատել են տեսնել ինչ որ գրվումէը գրատախտակի վերա, բայց տեսել են միայն ուսուցչի մէջքը։ Յետոյ երբ նոքա սկսումեն անուշադիր լինել բնականաբար, ուսուցիչը յանդիմանումէ նոցա։ Բայց ոչ է մեղաւոր։ Սակայն շատ միջոցներ կան ուշք գրաւելու։ ա) Ուսուցիչը պիտի բոլոր ժամանակ տեսանելի լինի աշակերտներին, ամեն վայրկեան այս պիտի աշխատէ։ Բայց նա նստած է։ Ստորին դասարաններում ուսուցիչը միշտ ոտի վերա պիտի լինի, բարձր դասարանում կարող է նստած ամենքին տեսնել, քիչ են։ Ուսուցիչը պիտի միշտ աշակերտի առաջ լինի, և երբէք պիտի չթողնէ աշակերտներին իւր ետև։ բ) Ուսուցիչը պիտի հսկէ թէ աշակերտը ինչ դիրք ունի։ Եթէ աշակերտը պատասխանումէ, ամենքին լսելի պիտի լինի, եթէ գրումէ, ամենքին տեսանելի պիտի լինի, եթէ նստած է, ուղիղ պիտի նստէ, մէջքը նստարանների մէջքին դէմ դրած, ձեռները իրանց մէջքի կամ սեղանի վերա դրած, բայց ոչ բազուկների վերա յենլով։ Նոքա ոչ պիտի պառկած լինին և ոչ թեքված։ գ) Առարկաների դասերի միջոցին գրքեր և տետրակներ պիտի չլինին աշակերտների առաջ, որ չնայեն անդադար։ Շատ անգամ տանը բոլոր դասը պատրաստած չունենա-

լով, երբ ուսուցիչը մինից հարցնումէ, միւսները կարդումեն և բացատրութիւն չեն լսում։ դ) Հարցեր տալու է աւելի ծոյլ աշակերտներին, եթէ մին չպատասխանէ, միւսից, երրորդից և այլնից հարցնելու է։ ե) Հարցը առաջարկելու է բոլոր դասարանին, յետոյ կոչելու է մի աշակերտին պատասխան տալու, անուն տալով և ոչ «դու, դու, ծայրին նստող» ասելով։ զ) Մին միւսից յետոյ աշակերտների նստած կարգով հարց անելու չէ ամբողջ դասը, սա ձանձրալի է մեծերի համար ևս, իսկ բաղմաթիւ դասարաններում մի աշակերտի շատ երկար հարցնելը կթուլացնէ միւսներին, այլ մինը պիտի սկսէ, միւսը պիտի շարունակէ, երրորդը վերջացնէ։ Ուսուցիչը պիտի աշխատէ որքան կարելի է շատ աշակերտներից դաս հարցնել։

2) Շատ ներդործեց իմ վերաս այն, որ աշակերտները չգիտեն ամենևին ինքնագործունէութիւն, չէր երևում, թէ նոքա գիտեն մտածել, երբ նոցա հարցնումեն, ջերմ համակրութիւն չեն ցոյց տալիս դէպի գործը։ Եթէ ուսուցիչը ուղղումէ աշակերտին մի դատարկ հարցն անգամ, աշակերտը կամ լռումէ, կամ առանց մտածելու մի անյարմար պատասխան է տալիս։ Պատահած է, որ աշակերտը դաս է պատմում շարունակաբար և սրխալներ է շարում, թէ ընկերներ և թէ ուսուցիչը անտարբեր լսումեն։ Կամ լեզուից վերլուծվումէ մի նախադասութիւն հայերէն թէ ռուսերէն, բառերը կարծես դուրս են քաշում աշակերտից. ուսուցիչն աւելի հարցերը է անում, քան թէ աշակերտը պատասխան է տալիս. ինչ մասն բանի է,

ինչի, ինչ անուն, ինչի, ինչ սեռ է, ինչ թիւ է, ինչ դէմք է, ինչ եղանակ է, ինչ հոլով, ինչի։ Կամ թէ «այս կարող է նախադասութիւն լինել, ինչի, ինչ նախադասութիւն, ինչի, որտեղ է անուն բայի, որտեղ է բայ» և այլն։ Աշակերտին սովորեցնելու է, որ այս բոլորը ինքն մտածէ և մին միւսի ետևից կարգով ասէ, որից շատ օգուտներ կան։ Նկատել եմ, մի որ աշակերտ խնդիրը տախտակի վերա է լուծում ուսուցչի օգնութեամբ, միւսները տեսրակի մէջ լուծելով միմեանցից օրինակումեն. ինքնագործունէութիւն, մտածութիւն չկայ։ Եթէ աշակերտը շուտ չէ պատասխանում ուսուցչին, ուսուցիչն իսկոյն պատասխանումէ նորա տեղ։ Միւս կողմից երկար սպասելու չէ, ժամանակ կորցնելու չէ, հարցը երկրորդին, երրորդին ուղղելու է, որ մտածեն։ Աշխատելու է, որ աշակերտը մտածելով պատասխանէ. պէտքէ մտածել և աշխատել սովորեցնել։

3) Որովհետև աշակերտները չեն մտածում, ուստի չեն յիշում ոչ միայն անցեալն, այլև նոր դասերը, կարծես երբէք չեն սովորել մի բան, երբ հարցնումես։ Իսկ եթէ դասը լաւ հասկանան դասարանում և յետոյ կրկնեն, նա այսպէս չի մոռանայ և տանը անգիր չի սերտի առանց հասկանալու։ Պէտքէ այնպէս դասավանդել, որ նոր դասը կապ ունենայ, շարունակութիւն լինի հին դասերի, դառնալով անդադար հին դասերին, հարցեր առաջարկելով դժուար տեղերից։ Նորը այն ժամանակ միայն կարելի է աւանդել, երբ հինը լաւ սովորած են։ Կարելի է մեծ թուանշան

նորան միայն նշանակել, ով հին դասն ևս գիտէ։

4) Ժամանակը խիստ տնտեսելու է. զանազան կողմնակի հարցեր և խօսքեր աւելորդ են աշակերտին առաջարկել, թէ ինչի նախընթաց օր չէր եկել, ուր էր գնացել, ինչի աշակերտը դասը չէր պատրաստել և այլն։ Այս բոլորը պէտք է դասից յետոյ. ամենայն բացատրութիւն տալու է յետոյ։ Դասը աշակերտներին է պատկանում և այդ խլել նոցանից անկարելի է առանց վնասի։ Տետրակները հաւաքելը, բերելը, վերադարձնելը ժամանակ է խլում։ Մինչդեռ դասարանում իւրաքանչիւր ոսպէ թանկ է և պիտի չկորչէ։ Օրապահը առաջագոյն պիտի ժողովէ տետրակները, սեղանի վերա դնէ և ուսուցիչը պիտի տուն տանէ, ուղղէ և յետոյ նկատողութիւնները հաղորդէ։ Աշակերտներին այս եղանակը կսովորեցնէ ժամանակը գնահատել, ճշդութիւն և կարգ պահել, և ամեն բան ժամանակին անել։ Այս յատկութիւնները կարևոր են և մենք ինքներս ենք պատճառ, որ աշակերտները չունին այս յատկութիւնները, մեր դասատուութեան եղանակի շնորհով։ Մանաւանդ ուշք դարձնելու է խիստ կարգապահութեան. որտեղ աշակերտները անկարգ են, այնտեղ դժուար թէ կարողանան բան սովորել։ Ուսուցիչները ուշք չեն դարձնում դաստիարակական պարտքերին, դպրոցից դուրս մանաւանդ։ Աշակերտը խաղումէ, բայց անկարգ, գնումէ դուրս, բայց անվայել խօսքեր է ասում ընկերին, այս բոլորը ուսուցիչը տեսնումէ և անտարբեր է, կարծես այն անձն օտար է իւր համար։ Հետզհետէ աշակերտն ստանումէ նոյն անտարբե-

րութիւն դէպի ուսուցիչը, և այնքան է յարգում և քաշվում ուսուցչից, որքան որ նա դասարանական յարաբերութիւն ունի առ նա, և եթէ ուսուցիչը մի անգամ յորդորական խօսք է ասում, սա օտարոտի է թուում աշակերտին և իրան պարտաւորված չէ համարում ուսուցչին լսել։ Մինչդեռ կանոնաւոր և ջերմ յարաբերութիւններ, բացի կրթողական նպատակից, օգտաւէտ կլինին ուսմանն ևս. աշակերտն ուսուցչի ամեն խօսքերին գին կդնէ։ Լաւ յարաբերութիւնների համար կարևորագոյն է, որ ուսուցիչը աշակերտին վայելուչ օրինակ լինի։ Հասակաւորներին նմանելը մանուկներին յատուկ սովորութիւն է, ուստի մանկավարժը բաց աչքով պիտի դիտէ և քննէ իրան, պիտի չը-մոռանայ երբէք, որ նորա իւրաքանչիւր խօսք, իւրաքանչիւր քայլ նկատվումէ աշակերտներից և առանց հետևանքի չի մնայ։

5) Աշակերտների վարմունքը դասարաններում շատ անհամեստ էին, իսկ դասարանից դուրս բոլորովին վայրենի։ Աշակերտուհիներն այնպէս աղաղակումէին, գոչումէին, վազումէին, թռչտումէին որ փոքրիշատէ վայելուչ արական դպրոցում աններելի կհամարվէր։ Թէ տղաների և աշակերտուհիների ձայները հասնումէին քաղաքի հեռաւոր տեղը, նոյնիսկ դասարաններում չափազանց աղմուկ էր լինում։ Աղմկալի դասարանում ուսուցիչն ինչ պիտի կարողանայ աւանդել։ Դասամիջոցներին աշակերտները վազումէին դպրոցից դուրս, գնումէին աղբիւրի մօտ, խաղումէին և գոչումէին փողոցի մէջ, զարմացնելով իրանց վարմունքով

անցորդներին։ Նոցա բերանից այնպիսի խօսքեր և հայհոյանքներ էին լսվում, որ գրել անյարմար եմ համարում, իսկ նոցա հայախօսութիւնը աւելի յարմար կլինէր այլախօսութիւն անուանել։ Ոչ միայն դասարանից դուրս, այլ նոյնիսկ դասարանում, և նոյնիսկ ուսուցչի բերանից լսվումեն իմ քոմս, տկի, զարնել, հրել, սրայով, շուշայ և այլն այսպիսի ռամկական բառեր։ Կրկնումեմ. աշակերտները շատ անկարգ էին նստում, միմեանց վերա յենլով, գրքերը, գլխարկները իրանց առաջ դրած, ձեռները չափազանց անկարգ և անհամեստ էին բարձրացնում, պատասխանները անգիր սերտած էին երևում. աշակերտը կրկնումէ. պէտքէ, պէտքէ, կամ մի մեծ դրան հասան, մի մեծ դրան հասան, և մոլորված չգիտէ թէ ինչ պիտի ասէ յետոյ։ Բառերի այս կրկնութիւններին այնքան անուշադիր են եղած ուսուցիչները, որ քանի մի աշակերտներ սկսել են թղուառաբար կակազել, որոնք սկզբում ամենևին կակազել չգիտէին։

Ընդհանրապէս ամենայն գրութեան միջոցին աշակերտները անկանոն են նստած, իրանը ծռած, գլուխը խոնարհած, գրատախտակներ կամ տետրակները բոլորովին թեքված, կուրծքը սեղանի տախտակին խիստ կպած,—սորանից աշակերտները շատ պիտի վնասվին։

Ուսուցչի հարցերը տուած միջոցին աշակերտները ձեռներն այնչափ անհամեստ կերպով են բարձրացնում, որ կարծես յարձակումն են անում և այդ բաւական չեն համարում, այլ զանազան նըշաններով ստիպել են կամենում ուսուցչին իրան-

ցեց հարցնելու։ Ուսուցիչներն ամենևին ուշք չէին դարձնում այս անվայել վարմունքին։

Ուսուցիչներն, գոնէ ոմանք, այն աստիճանին աշակերտներին ուղղելու անուշադիր էին, որ մի աշակերտն ասաց ուսուցչին, երբ սա հարցրեց թէ ինչ ասացի. դու ասացիր, որ Լայլն։ Եւ ուսուցիչը հարկաւոր չհամարեց հասկացնել աշակերտին թէ ուսուցչին և առհասարակ հասակաւոր անձին չէ կարելի եզակի թուով դու ասել, այլ քաղաքավարութիւնը պահանջումէ յոգնակի թուով դուք ասել։

Ոմանց ուսուցիչների բացատրութիւններն անճիշդ են, որից երևումէ, որ տանդելի դասերն առաջադոյն չեն պատրաստվում և կշռվում։ Մեծ մասամբ սխալներն իրանք ուսուցիչներն են ուղղում փոխանակ աշակերտներին մատնել հրաւիրելու և նոցա ուղղել տալու։

Պատմութեան դասին բազմաթիւ անուններ էին յիշատակում, իսկ թուականը չլսվեցաւ և ոչ մի անգամ։ Ուսուցիչը շատ երկար պատմումէր առանց աշակերտին կրկնել տալու իւր պատմածը։ Ուսուցչի պատմած միջոցին աշակերտներն աչքի առաջ չունէին քարտէզ։ Ստորին առաջին դասարանում անգամ աւանդվումէր ընդհանուր պատմութիւնը և աշակերտները բոլորովին անգարգացած լինելով ոչինչ չէին հասկանում։ Տէրութեան դպրոցներում անգամ, որտեղ աշակերտներն անհամեմատ աւելի զարգացած են լինում քան թէ մեր հոգևոր դպրոցներում, որտեղ բարձր դասարանի աշակերտը դեռևս գրավարժութիւն չունի, գրեթէ

ընդհանուր պատմութիւնը ոչ միայն առաջին դասարանում չէ աւանդվում, այլև ոչ երկրորդում, ոչ երրորդում, այլ չորրորդում միայն։ Մեր դպրոցներում վայրենի և անհեթեթ երևոյթներ շատ կան։

Թելադրութեան միջոցին չափազանց ծանր էր թելադրում ուսուցիչը. ինչ որ 10 րոպէում կարելի էր անել, հարկաւորվեցաւ 25 րոպէ։ Գծագրութեան դասին ամբողջ դաս գրեթէ ուսուցիչն էր խօսում. քառակուսի բաժանել գանազան քառակուսիների, աշակերտները սակաւ էին խօսում և մտածում։ Այլև տետրակները նայելու իւրաքանչիւր աշակերտին դուրս կանչելն անյարմար է և ժամանակ է խլում. աւելի յարմար է նայել այն ժամանակ, երբ գծագրումեն և այնպէս ուղղել սխալները։

Շատ անգամ ուսուցիչը, ասացի, շատ գռեհկական բառեր է գործածում, երբեմն ևս փոքրերին անհասկանալի բառեր. արթուն մնաք, ուսանենք. սա ցոյց է տալիս որ ուսուցիչը համակարգութեամբ (սիստէմով) չէ վարվում, չէ մտածում թէ ինչ բառեր կարելի է գործածել։

Նկատել եմ, որ դասի միջոցին աշակերտը հանումէր գրասլանակից հաց կտոր կտոր և ուտումէր, ուսուցիչը պատմումէր։ Այս ձևով աշակերտը բացի չսովորելուց, շատ վատ սովորութիւններին կընտելանայ, գուցէ և գողութեանն ևս։ Ուսուցիչը ղեկանկատ պիտի լինի և զանցառութիւն նկատելիս, հրամայէ դադարել։ Դաս վերջանալուց յետոյ ուսուցիչները մնումէին դասարանում, իսկ

ոմանք զանգակին չէին սպասում և դուրս էին գալիս։ Մինչև անգամ պատահեց, որ մի դասարան առանց զանգակի գնումէր աղօթումէր, միւսները դեռ ևս դաս էին շարունակում մինչև զանգակ խփելը, մի ուրիշ անգամ զանգակը շատ շուտ սըխալմամբ խփված լինելով, ուսուցիչը անմիջապէս թողնում գնումէ, թէև ուրիշները պարապումեն. անտանելի անկարգութիւններ էին։ Զանգակը ժամացոյց է. աշակերտների բոլոր պարապմունքը զանգակով են կարգաւորվում. նոցա շատ սիրել տալու է կարգով գործ կատարել և ժամերը գնահատել տալ։ Ամէրիկայում աշակերտները ժամացոյց ունին։ Դաս սկսելու զանգակ խփելուն պէս աշակերտները պիտի մտնեն դասարան և վերջանալու զանգակ խփելու հետ պիտի արձակվին, առանց մի բոպէ ևս արգելվելով։ Իրաւունքից զրկվել սովորեցնելու չէ, մանաւանդ որ մաքուր օդ պիտի ծծեն, բնական կարիքներ ունին և այլն։

Երբ մի աշակերտ կարդումէ և միւսները լսումեն, առաւել օգտաւէտ է, որ նոյնինքն աշակերտներն ուղղեն ընկերի սխալները քանթէ ուսուցիչը։

Բառ առ բառ թարգմանութիւնը սկզբում դժուար է և երբեմն անօգուտ, երբ դեռ ևս ձևերը չըգիտեն. օրինակ, ոտից-տոներին, լերանց-լեռներին, կամ думая-մտածելով. սկզբում բառի իմաստ հասկանալն, գոնէ ռուսերէնից, աւելի բնական է քանթէ ձևը. մանուկը միշտ սկսումէ խօսել անկանոն ձևերով։ Մեր դպրոցներում շատ ժամանակ գործ ենք դնում առանձին բառերի և խօսքերի թարգմա-

նութեան վերա, ուստի մեր աշակերտները չգիտեն լեզու գործնականապէս, ինչպէս տէրութեան ուսումնարաններում, որտեղ արդէն նախակրթարանում սկսումեն ուղղակի պատմել տալ կարդացածը։ Շատ անգամ ուսուցիչը հայերէն է խօսում, օրինակ կարող է ասել старикъ ինչ բառ է, արական, թէ իգական. մէկ ինչպէս կլինի ռուսերէն և այլն։ Հարկաւոր է ռուսերէն դասին ռուսերէն խօսել և խօսեցնել։ Բառեր թարգմանելիս ուսուցիչն հարցրեց. ինչ է ՀԵՄ, աշակերտուհին պատասխանեց. քայլ, ուսուցիչն ուղղեց. քայլը ենք ասում։

Բոլոր ուսուցիչները միևնոյն ընդհանուր գործ են առաջ վարում, միմեանց օգնելով և լրացնելով։ Ուրեմն ինչ հարկ է ընդհանուր աշխարհագրութեան դասին Ռուսիայի մասին տեղեկութիւններ թելադրել, երբ Ռուսիայի աշխարհագրութեան առանձին դաս կայ։

Դասարանում շրջելով դաս պատմելը շատ անյարմարութիւններ ունի. աշակերտները ստիպված են անդադար ուսուցչի գնացած կողմը դառնալ, անհանգիստ մնալ, ոմանք անուշադիր են մնում, ոմանք ուրիշ գործով կզբաղին, երբ ուսուցիչը նոցա չէ տեսնում, և գլխաւորապէս կորչումէ աչքերի ազդեցութիւնը, որ շատ մեծ նշանակութիւն ունի, մանաւանդ եթէ ուսուցիչը գիտէ աչքերով ևս խօսել։

Աշակերտների մեծագոյն մասը 12 ժամին արձակվումէը տուն. սա իհարկէ հիմնական վընասակար անկարգութիւններից մին է, երբ 90 աշակերտով դասարանը օրական 3 դաս ունի, 12-ին

տուն արձակվելով , և միւս կողմից 10 աշակերտ առանձին դասարան են կազմում, թէև սոցա տեղեկութիւնները շատ և շատ սակաւ տարբերութիւն ունին իրանց նախորդ դասարանի աշակերտներից, այն ևս մի երկու առարկաներից միայն։ Բայց սոցա մասին արդէն տնօրէնութիւն եղաւ։ Ուսուցիչներ չափազանց խռնված էին շրջում աշակերտուհիների մէջ. սա անյարմար երևոյթ է։ Ուսուցիչները քաղաքավարութեան օրինակ պիտի լինին, ով չգիտէ պիտի սովորէ։ Իրանց քաղաքավարի վարմունքով օրիորդների հետ պիտի սովորեցնեն թէ նոքա ինչպէս պիտի խօսեն կամ վարվին տղամարդիկների հետ։ Դասարաններում ուսուցիչներն հարկաւոր չէին համարում կարգ պահպանել և սովորեցնել. օրինակ, նստարաններ անկարգ են դրված, այնպէս և մնումէին, երբ թէ միայն ծառան պիտի հոգար այդ, ինչոց, կաւիճ ընկած են գետնին, դուռը բաց է, ուսուցիչը չէ պատուիրում աշակերտին, որ ընկածները ժողովէ, դուռը փակէ։ Աշակերտներից օրապահներ չլինելով, դասարանը կարգի բերելու ոչ ոք հոգացող չկար. ուսուցիչների ստորադրութեան մատեանը յետոյ ևս երկար չէր ստորագրվում կարգով։ Սա կարեւոր է իմանալու թէ ինչ ուսուցիչ ինչ է աւանդում այս ինչ օր։ Թուանշաններ գրելու սովորութիւն բոլորովին վերցված էր, մինչդեռ տեսչին անհնարին է ուրիշ կերպով հսկել աշակերտների առաջադիմութեանը, թողնենք ուրիշ կողմեր։

Առանց խօսելու ռուսական լեզուից չլսված սըխալներով գրելու մասին, չէ կարելի չյիշել, որ

բարձրագոյն դասարանի 7 տարի դպրոցում սովորող 16 ամեայ տղան տժգոհ գրելու փոխանակ գրումէ դշգոյ, 8 տարի սովորող 18 ամեայ տղան գրումէ կառաարութիւն, համրանքները փոխանակ համայնքներ, կար՝ փոխանակ կարգ, դասակար՝, ժատ փոխանակ շատ, օրէնքները և այլն։ Եւ եթէ սոյն աշակերտները նշանակվումեն կիւրակէ օր ս. պատարագին գիրք կարդալու, շատ օրեր պատրաստվելուց յետոյ, կիւրակէ օրը դարձեալ բազմաթիւ սխալներով են կարդում։

Ուսուցիչների մէջ նկատելի չէ ոչինչ գրեթէ համերաշխութիւն։ Ուստի պէտք ասել, որ թէ ուսումն և թէ կրթութիւն պակասումէին։ Ընդհանրապէս կրթութիւնը չափազանց անխնամ և անհոգ թողուած էր։ կարծես կրթութիւն, մաքրութիւն բառերն անգամ անյայտ էին դըպրոցում։ Դժուար է այս միայն նախագծերի (պրոգրամների) պակասութեանը վերագրել։ Ամեն նախագծերի լաւագոյն կանոնաւորիչը ինքն ուսուցիչն է, երբ նա համերաշխաբար է ներգործում իւր պաշտօնակիցների հետ։ Իմ կարծիքով նախագծերի մասին ամենայն դատողութիւններն աւելորդ կհամարվին այն օրից, երբ իւրաքանչիւրը և ամենքը միասին կհասկանան, որ ուսման գլխաւոր, յատուկ խնդիրն է աշխատել մանուկի և պատանու մէջ զարգացնել մտածողական ընդունակութիւններ և գիտակցական յարաբերութիւն առ ամենայն շրջապատող երևոյթներ, և ոչ թէ մանուկի գլուխը բազմաթիւ տեղեկութիւններով լցնելու աշխատութիւն միայն պէտք է, այլ

անհրաժեշտ է ուսուցչի կողմից անդադար հոգացողութիւն, որ աշակերտը իմանայ այն ամենն, առանց որի անհնարին է ապրել։ Երանի թէ բոլոր ուսուցիչներն իմանային Ֆրանսացի դատաւորը Ագիւսսօի այս խօսքերը, որ գրեց նա իւր անդրանիկ որդուն, երբ սա վերջացրեց իւր դպրոցական դասընթացը. «Որդեակ, ձեր դասերը վերջացել են, ձեր ուսումն պիտի սկսվի»։ Այս խօսքերն ասված են 18 դարի կէսում. 19 դարի վերջում ուսուցիչներն այս խօսքերը քաջ հասկանալուց յետոյ գուցէ առաւել պատշաճաւոր ուղղութիւն կտային երանց դասատուութեանը։ Ֆրանսացի մանկավարժ Գուէարը ասումէ, որ ամենամեծ նշանակութիւն ունին պատանու զարգացման վերա ընթերցանութիւնը, խօսակցութիւնը, ճանապարհորդութիւնը և գլխաւորապէս ծնողների և դաստիարակների խորհուրդները։ Իսկ գերմանացի իմաստասէր Կանտը, կամենալով ցոյց տալ խօսակցութեան բոլոր նշանակութիւնը մանուկի զարգացման համար, ասումէ. «Աւելի յաճախ ծնողները խօսումեն մանուկների հետ միայն առանձին դէպքերում, մինչդեռ թէ երանց և թէ պատրաստվող ապագայի օգուտը պահանջումէ, որ ծնողները միշտ խօսեն զաւակների հետ։ Այս կրթութիւնը արդարև նախագիծ չունի, բայց նորա նախագիծը նոյնինքն կանոնաւոր հասկացված և օգտաւէտաբար վարած կեանքն է»։ Բայց կարող է արդեօք խօսակցութիւնը օգուտ բերել, երբ ուսուցիչների և նոցա հայեացքների ու գործունէութեան մէջ համերաշխութիւն չկայ։

Նախագծերիս գրքոյկում ասել եմ և այստեղ ևս կրկնումեմ, որ աւանդելի առարկաների մէջ կապ պիտի լինի. օրինակ, պատմութեան և աշխարհագրութեան մէջ այսպիսի կապ պիտի լինէր. երբ աշակերտներին աւանդվումէ արևելքի պատմութիւնը, աշխարհագրութենից պիտի աւանդէին Ասիա և Աֆրիկա, նոյնպէս երբ աւանդվումէ Ցունաստանի և Հռովմի պատմութիւնը, աշխարհագրութենից պիտի աւանդվի Եվրոպան։ Միևնոյն համաձայնութիւն պիտի լինէր լեզուների ուսուցման վերաբերմամբ։ Քերականական հասկացողութիւններ աշակերտներն իրանց հասկանալի մայրենի լեզուի դասերին պիտի ձեռք բերէին, այնուհետև հեշտ կլինէր օտար անունները սովորել։ Ապա թէ ոչ դժուար կլինի նոցա թէ նոր գաղափարներ և թէ նոյն գաղափարներ յայտնող բառերը սովորել անծանօթ լեզուով։ Ի՞նչ միտք կարող է ունենալ ռուսերէն հոլովմունք և խոնարհմունք սովորելն, եթէ մանուկներն չգիտեն այս ձևերի գործածութիւն մայրենի լեզուով։ Ահա այստեղ ևս դարձեալ հարկաւոր է, գործի յաղողութեան համար, համերաշխ ներգործութիւն։

Վերջացնելով խօսքս պիտի յայտնեմ, որ մեր դպրոցները մի բաւական խոշոր պակասութիւն ևս ունին. որքան նկատեցի և իմացայ դպրոցի և ծնողների մէջ չկայ ոչինչ կենդանի և սերտ կապակցութիւն։ Երբ այս մօտ օրերս հրաւիրեցի ծնողներին քանի մի խնդիրներ նոցա առաջարկելու, ամենայն պատրաստականութեամբ ընդունեցին հրաւէրս և շատերն ասացին ինձ, որ այդպիսի հրա-

ւէր նոքա երբէք չէին ստացել։ Աւելի կանոնաւոր և հաստատուն յարաբերութիւն սահմանելու համար դպրոցների և ծնողների մէջ, ցանկալի կը լինէր մանկավարժական ժողովներ կազմել։ Ամիս մի անգամ ուսուցիչներից մին կկարդայ ժողովում դատողութիւն որևիցէ մանկավարժական խնդրի մասին։ Այս յօդուածը կարելի է առաջադրել ուսուցչական խորհրդում կարդալ։ Ներկայօղ ծնողները, մասնակցելով կարդացած դատողութեան առիթով եղած խօսակցութեան մէջ, կարող են յայտնել իրանց ցանկութիւնները, նկատողութիւնները և այլն։ Այսպիսի ժողովները լինումեն արդէն Նօրվէգիայում, Շվէցիայում և նոր սկսել են Գերմանիայում։

Այս են ահա նկատողութիւնները և նոցա հետևանքները, բայց իհարկէ սոցանով չեն պարզվում բոլոր այն խնդիրներն, որոնք դպրոցի կեանք են կազմում և որոնք մեր անդադար ուսումնասիրութեան նիւթ պէտք լինին»։

Մանկավարժական խորհուրդը լսեց տեսչի նկատողութիւնները, համաձայնեց նորա մակարբութիւններին և որոշեց ընդունել ի կատարումն և ի ձեռնարկութիւն։

ԱԽԱԼՑԽԱՑԻ ԵՒ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՎԻՃԱԿԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ

Թէև այս յօդուածը բուն մանկավարժական չէ, բայց եկեղեցական ուսուցչութիւնն ևս բարոյական դաստիարակութեան կվերաբերվի, եկեղեցին միևնոյն կրթական լսարան է։ Այլև մեր ուսուցիչներից շատ շատերը քահանաներ են, շատերն ևս վերջը քահանայութիւն են ստանում։ Ուստի այս գրութիւնը առանձին՝ ուղարկելով Ախալցխայի և Ախալքալաքի վիճակի հայ քահանաներին, աւելորդ չհամարեցինք Մանկավարժանոցում ևս հրատարակել։ Խմբ.

Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն, եղբարք եւ պաշտօնակիցք իմ, յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։

1) Քահանան ոչ միայն խորհուրդների և ծէսերի կատարող է, այլև նոյնիսկ սրբանով իւր ժողովրդի բարոյական կեանքի ուղեցոյց է, հոգևոր իշխանութիւն և ոյժ է, որը պիտի ուղղէ և կարգաւորէ իւր ժողովրդի բարոյական դրութիւնը։ Նորա հոգացողութեան են յանձնված հաւատացողների սրտերը և հոգիները և իւրաքանչիւր կորած հոգու համար նա պարտական է հաշիւ տալ Աստուծու առաջ։ Բոլորն ինչ որ լինում է հաւատացողների ներքին կեանքի մէջ, նոցա խորհրդածութիւնները, տարակուսութիւնները, ձրգտումները, սովորութիւնները, համակրութիւնները,

նոցա ցաւ և ուրախութիւնը, այս ամենը պիտի լինի քահանայի ուշադրութեան և հոգացողութեան առարկայ։ Քահանան ամեն միջոցներ պիտի գործ դնէ իւր ժողովրդի մէջ հաւատ կենդանացնելու և կենդանի պահելու, մօտեցնելու մարդիկներին իրանց Աբարչին և Փրկչին ոչ թէ լոկ խօսքով, այլ անձամբ կենդանի հաւատ ունենալով, անկեղծութիւն սիրելով և առաքինի կեանք վարելով։ Եթէ ամեն հանգամանքում օրինակը նշանակութիւն ունի, եկեղեցում և դպրոցում գլխաւոր ներգործող և ազդող միջոցը օրինակն է, որով կարելի է ժողովրդին Ճշմարիտ քրիստոնէական զգացմունք ունենալուն նպաստել։ Քահանայի և նորան ստորադրված սպասաւորների ամեն շարժմունքը եկեղեցում պիտի լինեն համեստ, խոնարհական, երկիւղածութեամբ և կենդանի հաւատով առ ներկայող կենդանի Տէրը։ Պաշտօնեաների այսպիսի վարմունքը և սորա համեմատ խրատները կյօժարեցնեն ժողովուրդը լռութեամբ և երկիւղածութեամբ աղօթել եկեղեցում, առանց շրջելու և մանաւանդ խօսելու։ Քահանան իւր հովուութեան յանձնված անձների և հայր է, և բարեկամ, և եղբայր, և խորհրդական, և հարկաւոր է որ այսպէս նայէր նորան նորա ժողովուրդը։ Հարկաւ սա հեշտ չէ, բայց ոչ ոք երբէք ասած չէ թէ հովուի պարտականութիւնները հեշտ են, եթէ նոցա լոկ արտաքին ժամատացութեան և օրինակատարութեան մտքով չնայենք։ Դուք ամենքդ այս գիտէք և պարտական էք գիտենալ, երբ յանձն էք առ-

նում ձեր վերա այս ծառայութիւնը։ Բայց և այնպէս կասեմ ձեզ իմ համոզումս, որ այսպիսի մի բարոյական առաջնորդող ոյժ լինելը ժողովրդի մէջ, նորա ներկայ դրութեանը նայելով, ամենևին այնպէս դժուար չէ, ինչպէս որ երևումէ։ Մեր ժողովուրդը պարզ է, գրեթէ բոլորովին անուս է, ինքն է որոնում առաջնորդողին և խորհուրդ է խնդրում,— քահանայի գործը, մանաւանդ գիւղերում զարգացած մարդիկների հետ չէ, որոնց կազմած համոզմունքը շատ թէ քիչ հաստատուն են։ Եթէ քահանան վոքը ինչ ուսած է, միշտ կկարօղանայ ժողովրդից բարձր լինել և նորա ղեկավար դառնալ, եթէ միայն իւր կեանքով և իւր անձնական յարաբերութիւններով դէպի ժողովրդականները չհեռացնէ նորա երանից։ Կդայ ժամանակ, գուցէ արդէն մօտ է, երբ աւելի դժուար կլինի նաև հասարակ ժողովրդի վերա ազդել. հարկաւոր է շտապել բարոյական ոյժի նշանակութիւն ձեռք բերելու, յետոյ արդէն ուշ կլինի։

Տեսականապէս այս հնմարտութիւնը շատ թէ քիչ միշտ խոստովանումէին, թէև պիտի ասեմ, որ պատահել եմ այնպիսի քահանաներին, որոնք իմ այսպիսի խօսքերը գրեթէ զարմացմամբ էին լսում, կարծես թէ նոր բան էր հաղորդվում նորա։ Սակայն գործնապէս շատ հազիւ էր կատարվում։ Բազմաթիւ բարդ պատմական հանգամանքներ, որոնց մասին ասելորդ և երկար կլինէր խօսել, պատճառ էին, որ մեզանում մինչև այսօր հոգևորականների ազդեցութիւնը ժողովրդի վերա շատ թոյլ է։ Ցաւ է ասել, որ մեզանում տարածված

սովորութիւնը բոլոր պարտքը սահմանաւորելու միայն օրինակատարութեամ և ժամասացութեամբ և այնուհետև բոլոր իւր պարտքը կատարած համարել, դեռ ևս շատ գործաւոր է։ Հրաւիրումեմ քահանաներին իրանց ուշքը դարձնել բարոյական ազդեցութեան այս պահանջմունքի վերա, և երբեք չմոռանալ իրանց բարձը կոչումն և նշանակութիւնը ժողովրդի մէջ։

2) Ժողովրդի վերա ազդելու, նորա սրտի տրամադրութիւնները և ձգտմունք ճանաչելու նշանաւոր միջոցներից մին, բացի շարունակ հսկելուց նորա բարոյական դրութեանը, խոստովանութիւնն է։ Ցաւ է ասել, որ այս մեծ խորհուրդը և հովուական գործունէութեան նշանաւորագոյն գործողութիւնը շատ շտապով է կատարվում։ Երկու երեք րոպէում ասվումեն բոլոր մեղքերը և շնորհվումէ արձակումն։ Զափազանց սակաւ կըպատահի, որ գոնէ համառօտապէս ազդարարէ խոստովանահայրը խոստովանողին այլևս չմեղանչել։ Մեղաչնելու ոչ պատճառներ, ոչ հանգամանքներ, ոչ ներկայ բարոյական դրութիւնը չեն հաղորդվում քահանային, սա ևս չէ ցոյց տալիս ոչ մեղքից ազատվելու միջոցներ, ոչ առաքինութեան ճանապարհ։ Եւ այն հոգևոր վէրքերից, որ նոյն խոստովանութեան խորհրդով կարողանումէ խոստովանահայրը իւր առաջ բացված տեսնել, ոչ մինին սպեղանի չէ դնում։ Այսպէս էր մեղանում վաղուց։ Քահանաներն ասումեն, որ խոստովանողները բազմաթիւ լինելով, անկարելի է լինում նոցանից իւրաքանչիւրին քանի մի բո-

պէտց աւելի նուիրել։ Սակայն կարելի է և պէտք է յորդորել ժողովրդականներին, որ նոքա չդան խոստովանելու միասին, մի օրում և ոչ երկու օրում, այլ սկսեն խոստովանութիւն հաղորդվելուց քանի մի օր առաջ։ Այս նպատակով կարեւոր է ապաշխարութեան օրերից առաջ խրատ խօսել, հասկացնելով ժողովրդին ապաշխարութեան խորհրդի նշանաւորութիւնը և մեծութիւնը։ Մեզանում արմատացած սովորութիւնը թեթև նայելու դեռահասների խոստովանութեանը նոյնպէս հաւանելի չէ կարող լինել։ Նոցա հետ պէտքեն նոցա հասակի համեմատ խրատներ, յորդորներ։ Գլխաւորապէս՝ սովորեցնելու է ամենքին ուղիղ հայեացք ունենալ ապաշխարութեան խորհրդի վերա։

Միևնոյն ժամանակ քահանաներն իրանց քաղցր պարտք պիտի համարեն անդադար յորդորել ժողովրդին, մանաւանդ խոստովանութեան և մահի մահճի վերա առ բարեգործական նուիրատուութիւն եկեղեցուն, դպրոցին, հիւանդներին և աղքատներին և Ս. Էջմիածնի Մայր Աթոռին, որը հայկական ազգի բարոյական փրկութեան և կենդանութեան Սրբավայր է։ Որովհետև հոգևոր վարչութեան պարտք է հոգալ ժողովրդի բարոյականութեան բարւոքումն, ուստի քահանաները պիտի յայտարարեն փոխանորդին տարին մի անգամ առ 1 յունվարի ժողովրդի մէջ արմատացած արատների և բարոյական պակասութիւնների մասին, ցոյց տալով նոցա պատճառներն և նոցա զարգացման նպաստող առանձին հանգամանքներ,

այլև պէտք է յայտնեն թէ ինչ միջոցների էին դիմում իրանք և ինչ անելու է նկատված բարոյական պակասութիւնները ոչնչացնելու համար։ Բարոյականութիւնը հարկաւոր է ընդարձակօրէն և ոչ նեղ մտքով հասկանալ։ Ընտանեկան կացութիւնը, ընտանիքի անդամների փոխադարձ յարաբերութիւնները, զաւակների կրթութիւն, նոյնպէս ժողովրդի յարաբերութիւնը առ հասարակական նշանակութիւն ունեցող գործերը, ժողովրդի մէջ ճշմարտութեան, օրինաւորութեան կամ կանոնապահութեան զգացման զարգացած լինելու աստիճանը, ժողովրդի համակրութիւն կամ հակակրութիւն առ հասարակական օժանդակութիւն կամ բարեգործութիւն, որևիցէ աղանդական սրամադրութիւն, կրօնական գեղծմունք կամ կրօնից սասանելու ձգտումներ, այս ամենը բարոյական կեանքի և բարոյական կացութեան երեւոյթներ են։

3) Բայց ամենառաջին և նշանաւորագոյն միջոց ժողովրդի վերա ազդելու քահանայի կոչմից, որը միջնորդ է կանգնած մեղանչող մարդկութեան և մարդասէր Աստուծու մէջ, եկեղեցական ուսուցչութիւն է։ Այս գործը մինչև այսօր մեր եկեղեցում անտես և անհոգ թողված է։ Սակայն քարոզը նոյնչափ կարևոր մասն պիտի համարվի տէրունական օրի ժամասացութեանը, ինչպէս Աւետարանի ընթերցանութիւնը։ Քրիստոնէութեան Հեղինակի գործը քարոզութիւն էր և իւր աշակերտներին գլխաւորապէս քարոզիչներ կարգեց։ Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն

հեթանոսս։ Ուրեմն քահանան պիտի աշակերտէ, պիտի ուսուցանէ։ Քարոզը արհեստական և վերացական պիտի չլինի իւր չոր և անկենդան նիւթով։ Այլ քարոզն նիւթը պիտի լինի լուսամիտ, ճշմարիտ, աստուածասաչտ կեանք. խնդրեցէք նախ զարքայութիւնն երկնից և զարդարութիւն նորա և այլն ամենայն յաւելցի ձեզ։ Քրիստոնէական քարոզութիւնը պիտի չստորանայ կուսակցութիւնների վէճերի և հակառակորդութիւնների ասպարէզ դառնալու։ Հարկաւոր է քարոզել Աւետարանը. և միայն Աւետարանը, այսինքն սէրը առ Աստուած և առ ընկեր, կրօնական և հասարակական պարտաճանաչութիւն և պարտակատարութիւն, անարծաթասիրութիւն և ճշմարտութիւն, ներողամտութիւն և մարդասիրութիւն, խաղաղութիւն և անչիչաչարութիւն, խստութիւն առ ինքն և զիջողութիւն առ ուրիշները, և յարգանք առ ամենքը։ Թիստ հարուածելու է Հայերիս մէջ խորին արմատներ ձգած անձնական բուռն կիրքերը և եսամոլութիւնը։ Երբ ամեն գործում քրիստոնեան առաջ է բերում իւր եսը այնտեղ մոռացված է և խափանված է ամեն աստուածային և մարդկային օրէնք. եսամոլ մարդը իւր եսը դարձրել է կուռք և պաշտում է նորան։ Եսամոլ մարդը նոյնպէս կռապաշտ է, ինչպէս ագահ և ժլատ արծաթասէրը։

Սխալ ճանապարհով չգնալու համար հարկաւոր է խնամքով պատրաստել խրատները, և ոչ անպատրաստ ատենաբանել, յուսալով անձնական ճարտարախօսութեանը։ Հարկաւոր է մեր աստուածային Փրկչի ոգով խօսել, պարզ, դիւրըմ-

բռնելի մաքուր ոճով։ Միևնոյն ժամանակ պէտք է քարոզել բժշկելու և ոչ դառնացնելու նպատակով, սրտերն առ Աստուած վերուղղելու և ոչ զայրացնելու...։

Քարոզի մէջ, ինչպէս և մասնաւոր խօսակցութիւնների մէջ անգամ, քահանան շատ զգոյշ և խոհեմ պիտի լինի ուրիշներին դատելիս։ Եթէ բարի բան ունի ասելու, կարող է աներկմիտ խօսել, իսկ եթէ տարբեր լեզուով պիտի խօսէ, լռել լաւագոյն է և աւելի քրիստոնէավայել է։

Ալէկոծեալ ժամանակի մէջ ենք ապրում. համոզմունքը փոփոխվումեն, նոյնիսկ հաւատը փոխվումէ։ Արդէօք ժողովրդի մէջ 100-ից հինգը հասկանումէ մեր սուրբ կրօնը։ Իսկ ինչ որ չգիտէ մարդս չէ կարող ցանկալ։ Երկար ժամանակ հայկական ազգը անսասան պահումէր իւր մայրենի կրօնը ընդհանուր ազգային ոգու ուժգին փչմամբ։ Իսկ այժմ, աւաղ, ուրիշ հողմեր են փչում, մանաւանդ Թերուս տգէտների կողմից։ Նոյն հողմերը փչումեն ժողովրդի վերա ևս։ Հարկաւոր է, որ հոգևորականները ամուր և պինդ կանգնեն այս հողմերի դէմ և դիմադրեն։ Հարկաւոր է լուսաւորել և ոգևորել ժողովուրդը կրօնի լոյսով և ճշմարիտ ոգով, կանոնաւոր և ակնածելի ժամասացութեամբ, ներդաշնակ և քաղցր ժամերգութեամբ և առաւելապէս քարոզով և խրատով, զարթեցնելով ժողովրդի մէջ քրիստոնէական և մարդասիրական զգացմունքը։

Մեր ժողովուրդը, առաւելապէս գիւղերում, այնքան քիչ է զարգացած և լուսաւորված, այնքան

սակաւ է հասկանում կրօնի ճշմարտութիւնները, այնքան սակաւ է պահանջում խրատներից, որ պէտք զարմանալ թէ ինչ կարող էր դժուարացնել քահանաներին խրատներ խօսելու։

Քահանաներին խրատ խօսելու դժուարացնող պատճառներից մին նոցա թիւը հայեացք է քարոզութեան վերա. սովորել են մտածել թէ քարոզը մեծ հմտութեամբ, ճարտասանական ձևերով և ոճերով պիտի ասվի։ Սա է հարկէ շատ ժամանակ և աշխատութիւն կպահանջէր։ Բայց այսպիսի քարոզի հարկաւորութիւն ևս չկայ ամենեւին։ Այսպիսի քարոզը աւելի վնաս կրերէ քան թէ օգուտ։ Հրաւիրումեմ քահանաների ուշադրութիւնը այս հանգամանքին։ Մեր Փրկիչը պարզ և հասկանալի առակներով էր խօսում երան լսող ժողովրդի հետ։ Թող իւրաքանչիւր քահանա խօսէ ուղղակի և պարզապէս այն, ինչ որ գիտէ (և նա գիտէ միշտ անհամեմատ աւելի քանթէ նորա գիւղական ունկնդիրը), և ինչ որ զգումէ երբև բեմի սպասաւոր և հովիւ։ Թող տաճարում ևս խօսէ նոյն պարզ յորդորական ոճով, ինչպէս որ խօսումէ ժողովրդի հետ տնային խօսակցութեան միջոցին։ Հարկաւ ոճի պարզութիւնը և ճշդութիւնը գռեհկաբանութեան և անվայելչութեան պիտի չփոխվին։

Մեր ժամասացութիւնը կատարվումէ գրաբար լեզուով, որը մեծ մասամբ անհասկանալի և անմատչելի է ժողովրդին։ Ուրեմն առանց մեծ աստուածաբան լինելու, ինչ կրօնական ճշմարտութիւններ որ ասէը քահանան որոշ և պարզ խօսքով, յարմար և

օգտաւէտ կլինէր։ Եթէ քահանան թարգմանաբար մեկնէ ժողովրդին կենդանի հասկանալի լեզուով կիւրակէ օրեր պատարագին կարդացած աւետարանը կամ աղօթքներ և ընթերցուածներ, քիչ օգուտ բերած չի լինի իւր ունկնդիրներին։

Հոգևոր դպրանոցում ուսում չառածները երբեմն կարծումեն թէ իրաւունք չունին խօսելու։ Այս կարծիքը անհիմն է մեր հանգամանքներում։ Ով կարող է և զգումէ իւր մէջ ոյժ և ընդունակութիւն, թող քարոզէ։ Ուսումնական հոգևորականը և հարկէ իւր քարոզը կարող է աւելի օգտաւէտ անել, բայց սրտանց խօսելը իւրաքանչիւր ոք կարող է։ Այլև դպրոցական վկայականը մեզանում դեռ ևս ուրիշներից, վկայական չունեցողներից, բարձր և գերազանց լինելու վկայութիւն չէ միշտ։ Վկայական չունենալն ևս չէ նշանակում միշտ տգիտութիւններ և մանաւանդ կենդանի կրօն չունենալ։ Դպրոցական ուսում չառած քահանաները, գոնէ ոմանք կարող էին կրօնական գրքեր կարդալով լրացնել իրանց կրօնական ուսման պակասութիւնը։ Մի բան կարող էր արգելք լինել թոյլ տալու, մանաւանդ գիւղական քահանաներին, իրանց սեփական խրատներ խօսելու,—ենթադրութիւն թէ մի գուցէ սխալ բան ասեն քրիստոնէական վարդապետութեան դէմ։ Բայց այս ենթադրութիւնը կարելի էր անել ամենքի վերաբերմամբ։ Վերջապէս, երբ մի անգամ նոքա ձեռնադրված են քահանայ, ուրեմն ունին և պիտի ունենան քահանայի բոլոր իրաւունքները, նոյն և ուսուցանելու իրաւունքը։

Իսկ քահանաների սեռաչների առաջն առնելու համար կայ գործակալների հսկողութիւնը։

Ճշմարիտն ասած ոչ մի պատարագը պիտի չըվերջանայ առանց խրատի. կրկնումեմ խրատը կիւրակէ օրի ժամասացութեան կարևորագոյն մասն պիտի համարվի միշտ։ Կենդանի խօսքը միշտ աւելի կենդանի և զօրեղ ազդեցութիւն է գործում, մանաւանդ հասարակ ժողովրդի վերա, որը սպրումէ աւելի տպաւորութիւններով քանէ իմացական կշռադատութիւններով։

Սկզբում իհարկէ քարոզի շարադրութիւնը լաւ սերտելու է։ Երբ այսպէս քանի մի անգամ կկրկնվի, այնուհետև պակաս կհարկաւորվի պատրաստութիւն և աննկատելի կերպով սովորութիւն կդառնայ առանց սերտելու խօսել, բաւական կըլինի միայն առաջագոյն կազմել քարոզի նախագիծը և ընդհանուր բովանդակութիւնը, և վերջը քահանան ընդունակ կդառնայ քարոզ ասելու յանպատրաստից։ Դիւղերում այս սովորել շատ հեշտ է։ Այնտեղ շփոթվելու առանձին առիթներ չկան։

Կարևոր եմ համարում պարտք դնել ամեն քահանաների վերա անշուշտ, բացի սովորական քարոզներից, որոնց նպատակը ժողովրդական բարոյականութեան բարձրումն է, կրօնական հաւատալիքների վերա ևս խօսելու, որոնք կարևոր են թէ դեռահասներին և թէ չափահասներին կրկնելու։ Շատ օգտաւէտ կլինէին նոյնպէս կրօնական զրոյցներ, եթէ օրինակ յայտնաւոր կարդալու փոխանակ սովորութիւն դառնային կրօնական պարզ խօսակցութիւններ տօն օրերին։

Ցանկալի կլինէր սահմանել քարոզչական օրագրութիւններ։ Առանձին մատեանում քարոզի բովանդակութիւնն արձանագրելը օգտաւէտ է ոչ միայն նորա համար, որ հնարաւոր կլինի հսկել քահանաների քարոզչական գործունէութեան վերա, այլև նորանով, որ օրագրութիւնը անդադար կը-յիշեցնէ քարոզելու պարտքը և կստիպէ աւելի մտածել նորա վերա։ Սակայն լոկ ձևի համար չեմ առաջարկում այս. օրագրութիւնները ճշդութեամբ պիտի գրվին և գործակալները տարին մի անգամ պիտի հաշիւ տան, թէ ո՞րքան, ո՞րտեղ քարոզ և կրօնական խրատներ են ասված, ինչի վերա և ինչ բնաբանով և ինչին վերաբերեալ, այսինքն ինչ պակասութիւն կամ արատ ոչնչացնելու համար էին ասվում, և թէ նկատելի է արդեօք որևիցէ բարւոքումն քարոզութենից և այլն։ Քարոզներ պիտի քննեն գործակալները։ Փոխանորդն ևս կնայէ և կկարդայ վերհակին այցելութեան միջոցում։

5) Քահանայական առաջին պարտքերից համարեցէք ամեն տեղ չունեցողներին և աղքատներին խնամակալող հոգաբարձութիւն հիմնելու և օգնելու. մեր ցէրը գլխաւորապէս թշուառ մարդկութիւն հոգաց և խնամեց։ Միևնոյն ժամանակ հոգալու է, որ ճշմարտապէս տնանկներ և անօգնականներ շահվին հասարակական տուրքից, իսկ աշխատել կարողացողների համար հոգալու է որևիցէ տեղ և գործ գտնելու։

Նոյնպէս առաջին պարտքերից պիտի համարէ քահանան, մանաւանդ գիւղերում, իւր ժողովրդի

մանուկներին, թէ տղաներին և թէ աղջիկներին որևիցէ հնարով քրիստոնէական վարդապետութեան սկզբունք և հայերէն գրագիտութիւն սովորեցնել, մանուկներին ժողովելով եկեղեցու գաւթում յարմարեցրած մի սենեակում կամ իւր տանը։

6) Ժողովրդի հետ ունեցած յարաբերութիւնների մէջ պահպանելու է ամենայն խաղաղութիւն, երբէք թոյլ տալու չէ կիրքերին յաղթելու, ոչինչ գործում չիշելու չէ ոստիկանութեան դիմելու սպառնալիքը։ Մանաւանդ քահանաները զգոյշ և հեռու պիտի մնան ում հետևիցէ դատ վարելուց։ Մեզ տուած է միայն հոգևոր գործիք մարդիկների վերա ներգործելու, այն է Աստուածային խօսքի զօրութիւնը։ Թէև հոգևոր ազդեցութիւնը աւելի դժուար է, բայց համաձայն է կրօնին, որը սրտի և համոզման գործ է և աւելի յարմար է մեր հովուական պարտաւորութիւններին։ Սպառնալիքը և պատժելու երկիւղը դպրոցից ևս արտաքսումն—ժողովրդի բարոյական դատապարտութեան մէջ ևս նոյնը պիտի լինի։ Քահանաները պիտի աշխատեն ազդեցութիւն ձեռք բերել ժողովրդի վերա իրանց միջոցներով, այսինքն հաւատի և համոզմունքի ջերմութեամբ թափանցված խօսքի զօրութեամբ։ Քահանայի նպատակը պիտի լինի ամենքին և ամենայնն հրաւիրել ի միութիւն, ընդնպաստելով բարոյապէս միացնելու բոլոր մարդկութիւնը, բոլոր ցեղերը և ազգերը և ստեղծելու երկրիս վերա մի աստուածային թագաւորութիւն։ Քահանայի իշխանութիւնը ծագումէ այն յաւիտե-

նական Քահանայապետի իշխանութենից, որը ինքնիրան զոհ բերեց մարդկային ազգի փրկութեան համար և մարմնացած սէրը է։ Քահանան խաղաղութեան և սէրի Աստուծու պաշտօնեայ է... հոգու և ճշմարտութեան կրօնի քարոզիչ է...։ Այս քրիստոնէական հովիւը չունի և չգիտէ ուրիշ զէնք բացի բարոյական հոգևոր զէնքից. նա կարող է ներգործել միայն խօսքի համոզմամբ, նա պիտի ամեն բանին յաղթէ համբերութեամբ և ամեն բանին հանդէ սէրով։ Եթէ նորան չէ համակրում ժողովուրդը, նորա ամեն ջանքերը զուր են. հոգիներ և սրտեր բռնութեամբ չէ կարելի գրաւել։

Եղբայրաբար համոզելով յորդորումեմ ձեզ անխափան ներկայ լինել եկեղեցում առաւօտեան և երեկոյեան ժամասացութեան, հայցելով Աստուածային օրհնութիւն անձներիդ և ժողովրդիդ։ Գործակալներին պատուիրումեմ առանձին արձանագրել բացակայողներին կամ յապաղողներին։ Այցելութեանս ժամին ես կկարդամ տարեկան նկատողութիւններ։

Քահանայի անձնական կեանքը նոյնչափ, եթէ ոչ աւելի, ազդեցութիւն ունի ժողովրդի վերա, որչափ նորա խրատը և քարոզը։ Մանաւանդ գիւղացիների պէս սարդ բնաւորութիւնների վերա օրինակը գրեթէ աւելի մեծ ազդեցութիւն ունի քան թէ խօսքը։ Կոպիտ պակասութիւններ հոգեւորականների մէջ, զոհութիւն Աստուծուն, շատ չեն պատահում։ Սակայն կայ ուրիշ պակասութիւն. սառն անտարբերը վարմունք ժողովրդի հետ։ Պիտի կամ մկրտվի, կամ պսակվի կամ մեռնի ոք մին,

որ քահանան այցելէ ժողովրդի տունը, մինչդեռ նորա պաշտօնն է լուր ժողովուրդը դէպի Աւետարանի թագաւորութիւնն առաջնորդել։ Նա անգադար ամենքին դուռը պիտի ծեծէ, աղքատին օգնութիւն և մխիթարութիւն տալու, հարուստից ողորմութիւն խնդրելու, հարուստին և աղքատին առաքինութեան Հանապարհը սովորեցնելու։ Քահանան պիտի լինի միշտ պատրաստական և մեղմ։ Սա չէ նշանակում թէ պէտք թոյլ լինի—մեղմութիւնը թուլութիւն պիտի չդառնայ, այլ թէ նոյնիսկ հովուական խստութեան և պահանջողութեան մէջ քահանան պիտի սիրող և ներող լինի թէ խօսքով և թէ ներգործութեամբ։

Մեր ժողովրդի դրութեան և կեանքի առանձնական պայմանները, նոյնպէս առանձին հնարագիտութիւն են պահանջում քահանայի կողմից։ Բաւական կոպիտ և դեռ էլ հին կարգով ապրող ժողովրդականները սխալ համոզումն ունին լոր թէ քահանան բոլորովին նոցա իշխանութեան ներքոյ է, որ լոր արժէ որ նոքա քահանային լրանց մօտ չունենալու ցանկութիւն յայտնեն և քահանային անմիջապէս կհեռացնեն, մինչև անգամ առանց նորան քննութեան ենթարկելու և առանց նոցա գանգատը քննելու։ Պէտք չէ վրդովվել և զայրանալ սորանով, և պատերազմել ժողովրդի այս հայեացքի դէմ։ Թոյլ տալու է, որ ժամանակը փոխէ նոցա այս հայեացքը։ Քահանաները կարող են բոլորովին համոզված լինել, որ առանց հնմնաւոր պատճառի ժողովրդականների խնդիրը յարգվելու չէ։ Ինչպէս միշտ և ամեն

գործում, քահանան վերջին դէպքում ևս պիտի ներգործէ ժողովրդի վերա բարոյական ազդեցութեամբ:

Մինչևոյն անհասկացողութիւն, իրաւունքների և պարտականութիւնների անճանաչողութիւն է պատճառ, քահանաների և եկեղեցական երեսփոխանների մէջ երբեմն ծագող խռովութիւնների: Ամենալաւ միջոցը խաղաղութեամբ ապրելու օրէնքի ճիշդ գործադրութիւն է և ճիշդ պարտաճանաչութիւն, մանաւանդ գրամական հաշիւների միջոցում:

Աստուծու տան պայծառութիւնը քահանայի գլխաւոր հոգսերից մին պիտի լինի: Եկեղեցին և գաւիթը աւել ածելուն և մաքրելուն, եկեղեցում ամեն տեղ փոշի սրբելուն քահանան պարտաւորված է խստութեամբ հսկել:

Վերջացնումեմ խօսքս Առաքեալի խրատներով, որ գրած է նա իւր հովուական գրութիւններում. Յիսուսի պաշտօնեան պիտի հրաժարվի պառաւների առասպելներից, յիմար և անխրատ խնդիրներից, որոնցից ծագումեն կռիւներ, պիտի լինի ուսուցիչ և անոխակալ, նորա առաջադիմութիւնը յայտնի պիտի լինի ամենքին և զգոյշ լինի անձին և վարդապետութեանը (Ա. Տիմ. Դ., Բ. Տիմ. Բ.):

Ախալցխայի եւ Ախալքալաքի փիմակի առաջնորդական փոխանորդ

Ախալցխա. ԽՈՐԷՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԷ

1884, Նոյեմբեր 1.

ՈՒՍՈՒՑԻՉ։

Ուսուցչի պարտքն է ուսուցանել և դաստիարակել։ Սա պարտքից աւելի է. սա մի առաքելութիւն է, մի պաշտօն է, որի վերա Ամէրիկայի Միացեալ Նահանգները նայումեն այնպէս, ինչպէս քահանայի կոչմանը։ Արդարև արդեօք ազնիւ առաքելութիւն չէ՞ երեխայի մտաւոր և հոգեկան ամենագեղեցիկ կարողութիւնները մշակելը, քաղաքացիները, ընտանիքի հայրերը, մայրերը պատրաստելը, որը ընդունակ լինի հասարակութեանն իւր վերա դրած պարտքերը կատարել։ Եթէ կըրթութեան արուեստը, Հ. Ժիռարի կարծիքի համաձայն, պէտք բարձրանայ և հասնէ կամքի և մտածութեան միջոցով մայրական բնազդման աստիճանին, ուրեմն ուսուցիչը ոչ միայն մի պաշտօնաւոր է, այլ մի առաքեալ, մի հայր, բազմաթիւ ընտանիքի մի գլուխ է։ Բայց մի այսպիսի ազնիւ և ծանր պարտք կատարելու համար, ինչպիսի չքնաղ յատկութիւններով պիտի պատրաստված լինի ուսուցիչը։ Եթէ նա ցոյց չտայ անդադար արթնութիւն իւր դիրքին, խօսքերին, վարմունքին հսկելու, եթէ նա չաշխատի միշտ ինքն իրան ուսուցիչ լինելու, ինչ յուսաբեկութիւններին պիտի ենթարկվի։ Մեկ հասարակաց. այս պիտի լինի նորա նշանաբանը, ապա թէ ոչ մանուկը անողոքելի կըլինի նորա վերաբերմամբ։ «Երեխաների միակ հոգսը, ասումէ Լա Բրիւիէռը, թոյլ կողմը գտնելն է իրանց ուսուցիչների կամ այն մարդիկների, որոնց հպատակումեն։ Երբ որ նոքա կարողացան մի

անգամ իրանց պարտքի դէմ գործել, երես են առնում և իրանց հրամայողների վերա իրաւունք են ձեռք բերում, որը երբէք չեն կորցնում»։

Եթէ ընդհակառակը ուսուցիչը կարողացաւ այդ իշխանութիւնը ձեռք բերել, իւր աշակերտները կլինին այն, ինչ որ պիտի լինէին ինքն ըստ ինքեան, որովհետև նոցա համար ուսուցիչը ոչ միայն օրինակ է նոցա աչքի առաջ, որին նոքա քննումեն զանազան կողմերից, այլ նաև բոլոր գիտութիւնների ամփոփումն է և բոլոր առաքինութիւնների ժողովածուն։ Այս առօրեայ և շարունակ ազդեցութեան շնորհով նա իւր ձեռներում ունի իրը փափուկ մի մոմ իւր կամքի համաձայն ձևակերպելու համար»։ Եղէք աւելի լաւ, ասումէր Սայլէռը ուսուցիչներին, և երիտասարդութիւնը առաւել լաւ կլինի»։ Այս իմաստուն պատուէրը ամեն դրաբոցի դրան վերա դրոշմված պիտի լինէր։

Թարգ. Ֆրանս. Կ. Մ.

ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ի՞նչ էակներ ունին պարտքեր եւ պատասխանատու են։

Բարոյախօսութիւն բառը կազմված է բարք, բարոյք և խօսել բառերից։ Բարք կամ բարոյք նշանակումէ մարդի բնաւորութիւն, բնական սովորութիւններ։ Բարոյականութեան աղբիւրն է նոյն Աստուածանը, որ ուսուցանում է նոքա կրօնի դասերին։ Բարոյական ճշմարտութիւններ ամփոփ կրկնել բարոյախօսութեան յատուկ դասերով երբէք աւելորդ չէ։ Ամեն արարածներ չունին

պարտք և իրաւունք։ Միայն մարդն է բարոյական անձն և պատասխանատու է, այսինքն պարտաւորված է վարվել կանոններին համաձայն և հաշիւ տալ թէ ինչէ այս կամ այն կերպով վարվեցաւ։ Պատասխանատու լինելու համար մարդը պիտի ունենայ. 1) դատողութիւն կամ բանականութիւն լաւը վատից որոշելու համար, 2) գիտակցութիւն այն գործի, ինչ որ անում է, 3) մտածելու ընդունակութիւն ներգործելուց առաջ։

Պատասխանատուութիւնը աւելանում է, երբ գործողը աւելի լաւ է հասկանում ինչ որ անում է և ինչ որ պիտի անէ։ Փոքր մանուկներին, խելագարներին, որոնք ոչ դատողութիւն, ոչ բանականութիւն ունին, նայելու է ամենայն ներողամտութեամբ։ Արբեցողներն ընդհակառակն թէև չը գիտեն ինչ որ անում են, արբած լինելով, արդարև արհամարհելու արժանի են. որովհետև նոքա կորցնում են բանականութիւնը իրանց յօժարութեամբ։

Առողջ միտք ունեցող ամենայն մարդ ունի լաւի և վատի գաղափար։ Մինչև անգամ Աֆրիկայի, Ամէրիկայի և Օվկիանոսական վայրենիները, որոնք ամենաթշուառ և ամենատգէտ մարդիկներ են, ճանաչում են պարտքը։ Նոքա շատ կոպիտ բարք ունին, նոքա գրեթէ միշտ միմեանց հետ պատերազմում են և մինչև անգամ ուտում են իրանց գերիներին, սակայն նոքա շատ յարգում են քաջութիւն, հաւատարմութիւն, տուած խօսքին հաստատ լինելը, նոքա արհամարում են վատթար և վախկոտ մարդիկներին և պատժում են դաւաճաններին։ Նոքա շատ պիտի առաջ գնան մինչև որ կհաս-

կանան մարդկային բոլոր պարտքերը և իրաւունքները, ինչպէս որ լուսաւորված մարդիկ են հասկանում, բայց նոքա ևս իրանց հասկացողութեան համեմատ բարոյական կանոնները ունին:

Ի՞նչ է պարտքը, որի գաղափարը ունի ամենայն մարդ։ — Պարտքը պատուէր է, հրաման է, ձայնի պէս մի բան, որ բարձր խօսումէ մեր մէջ և պահանջումէ, որ իրան լսեն։ Պարտքը անպայման պատուիրան է։ Պարտքը մեզ չէ ասում. եթէ դու կամենումես բաղդաւոր լինել, մի աներ այս, եթէ դու կամենումես հարուստ լինել, արա այս։ Պարտքը ասումէ մեզ պարզապէս. այս մի աներ, այս արա։ Օրինակ, խօսքիդ հաստատ եղիր ամենայն հնարով, որովհետև այս լաւ է, դու պարտական ես այս անել։ Սուտ մի խօսեր, մի գողանար, մի բամբասեր, որքան վայելչութիւն և օգուտ ևս գտնես սորանում, որովհետև սա վատ է և բանականութիւնն արգելումէ։

Ուրեմն պարտքը բոլորովին ուրիշ բան է քան թէ վայելչութիւն, թէպէտ պարտքը կատարելու չափ վայելչութիւն չկայ, նոյնպէս բոլորովին ուրիշ բան է քան թէ օգուտը, թէպէտ աշխարհումս ոչինչ այնքան օգտաւէտ չէ, որքան ազնիւ մարդ լինել։ Ազնիւ լինել նշանակումէ լսել միշտ բանականութեան, խղճի ձայն և կատարել այն, ինչ որ պարտական է մարդը առանց վայելչութիւն կամ շահաւէտութիւն աչքի առաջ ունենալու։ Գրեթէ բոլոր սխալների, բոլոր յանցանքների պատճառները վայելչութեան սէր և շահաւէտութեան հաշիւներն են լինում։ Մենք ևս ամեն

վայելչութիւններ ունեցողին չենք ասում բաղդաւոր մարդ և իւր գործերն յաջողակ վարողին չենք ասում ազնիւ մարդ։ Ազնիւ մարդը կարող է լինել աղքատ, հիւանդ, տգէտ, անօգնական, ամեն բանից զրկված. այսուամենայնիւ նորան ենք տալիս մեր ամենաջերմ յարգանքը և մեր գովեստները։ Եթէ մենք իմանայինք, որ նա բարի է գործում շահաւէտութեան նպատակով, նոյնժամայն նորա բարի գործերը մեր աչքին բոլոր իրանց արժէքը կկորցնէին, բայց երբ հաստատ գիտենք, որ նա ներգործումէ ճշմարիտ բարութեամբ, առանց հաշուի, պարտքի անկեղծ և խորին զգացմամբ, մենք նորան խորին և անկեղծ կերպով յարգումենք։ Ամենքը խոնարհումեն նորա առաջ։

Եւ որքան ներգործողը աւելի անձնանուիրաբար է կատարում իւր պարտքը, այնքան աւելի վսեմ և մեծ է լինում մեր յարգանքն առ նա։

Բարի գործելու և ամեն բանում պարտք կատարելու սովորութիւնը ասվումէ առաքինութիւն. և որքան աւելի դժուար է գործը, այնքան աւելի մեծ է արժանաւորութիւնը։ Ընդհակառակն արատ ասվումէ վատ և պարտքի ընդդէմ վարվելու սովորութիւնը։

Մի սխալ արատ չէ, բայց սխալն անդադար կրկնվելով դառնումէ արատ և նայելով արատների ծանրութեանը, մենք նայումենք յանցաւորին կասկածով, արհամարհանքով, զզուանքով, ատելութեամբ, զարհուրանքով։ Երբ պարտքի ընդդէմ վարվող յանցաւորը մարդը անարգութեան այն աստիճանին է հասնում, որ չունի ոչ խղճահարու-

թիւն, ոչ ամօթ, ոչ արժանիք և նորա անիւմն անդարմանելի է երևում, այն ժամանակ մենք դժուարանումենք նորան մարդ համարել։ Թէպէտ այն դէպքում ևս մենք նորան ներողամտաբար պիտի նայենք, որովհետև մարդկային անձն է և կարող է դեռ ևս ուղղվել։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ։

Խոցված և դառնացած սրտով Մանկավարժանոցն ևս ողբաց և ողբումէ ամենապատիւ Կ. Պոլսոյ Պատրիարք Ներսէսի մահը։ Մանկավարժանոցիս խմբագիրը, որը Ներսէսի յիշատակը պաշտօղներից է, Ախալցխայում և Ախալքալաքում վայելչապէս կատարեց հանդուցեալ Ներսէսի հոգեհանգիստը։ Անմոռանալի Դէորգ Կաթողիկոսի մահից յետոյ, մահացաւ Ներսէս Պատրիարքը։ Մբեսեթարվինք նորանով որ երկրիս վերա չկարօղանալով կատարած տեսնել իւր փափագները մեր թիւրքիաբնակ թշուառ Հայերի վերաբերմամբ, ցանկալի Ներսէսը շտապեց երկնային Թագաւորին մատուցանել իւր աղերսանքը և աղաչանքը իւր սիրած ազգի համար։ Կեանքի ամենապնիւ ծաղիկներով թող զարդարվի այսուհետև Քո գերեզմանը, Ներսէս։

Ամէրիկայի Միացեալ Նահանգներում աղգային լուսաւորութեան գործակալի հաշուից երևումէ, որ անցեալ 1883-ի բոլոր դպրոցական հասակ ունեցող մանուկների թիւը եղել է 16 միլիոն, որոնցից 10 միլիոն զանազան դպրոցներում աշակերտելու նշանակված էին։ Իսկ ամեն օր դպրոց յաճախող մանուկների թիւը 6 միլիոն էր, որոնք սովորումեն 293,000 ուսուցիչների ղեկավարութեամբ, և սոցա մեծ մասը կանայք են։ Դպրոցական այս վիճակների կազմակերպութիւնը արժեց միայն անցեալ տարին 91 միլիոն դոլար (դոլ. 1 ման. 32 կոպ)։ Բոլոր նահանգներում ձգտումեն ուսուցչուհիների թիւը աւելացնել, որովհետև կանայք տղամարդկիներից աւելի ընդունակ են երևում մանուկների կրթութեան համար. 18 նահանգում աւելացրել են երկսեռ ուսուցիչների ռոճիկը, 1 նահագում աւելացրել են միայն ուսուցիչների ռոճիկը, 4 նահանգում միայն ուսուցչուհիների ռոճիկը։

Նէգրներից 834,000 մանուկներ յաճախումէին դպրոցներ։ Սոցանից 8000 նէգր աշակերտներ սովորումէին մանկավարժանոցներում, 6600—ճեմարաններում, 2300—կոլլէժներում (սկզբ. և քաղաք. դպրոցներում) և 800 նէգրներ սովորումէին աստուածաբանութիւն և բժշկականութիւն։

Ծաղկոցների թիւը 348 էր 17000 մանուկներով։ Բարձրագոյն միջնակարգ դպրոցներում սովորումեն կէս միլիոն պատանիներ, որոնցից 300,000 սովորումեն ճեմարաններում, հասարակական բարձր դպրոցներում և առևտրական դպրոցներում, 50,000 պատանիներ սովորումեն մանկավարժանոցներում,

ժամանակով ուսուցիչները դառնալու, 93,000-ը կոլ-լէժներում։ 16,000 նշանակված են գիտական դասընթացները լսելու և 23,000 ուսանողները լսում-են աստուածաբանութեան, բժշկականութեան և օրէնսգիտութեան դասընթացներ։

Ազգային լուսաւորութեան գործակալը կուսակից է տղաների և օրիորդների համախումբ ուսմանը։ Նա ասում է, որ բոլոր այն գաղթականների նախագահները, որտեղ համախումբ ուսում է աւանդվում, չափազանց գովումեն այս սիստէմի հետեւանքները։ 40,000 աշակերտող օրիորդների կէսը տղաների հետ միասին են սովորում բարձրագոյն կոլլէժներում և նոցա բարեբարոյութիւնը օրինակելի է։

Մարմնամարզութիւնն աւանդվում է ամեն տեղ և հիանալի հետեւանքներ ունի ոչ միայն աշակերտների առողջութեան, այլև նոցա ուսումնական պարապմունքի վերաբերմամբ։

Այժմ Նէապոլում ապրող Ֆրանսացի տիկին Մէրիկոֆ քաղաքում տիրապետող աղքատութեան դէմ մաքառելու համար յայտարարել է տեղական լրագիրներում թէ ամեն մի տղային, որը լուանումէ երեսը և սանտրումէ մազերը, օրը 5 սանտիմ (2½ կոպ.) կնուիրէ, իսկ ամեն օրիորդին 10 սանտիմ (5 կոպ.)։ Եւ ամեն օր ժողովվումեն նոցա տան առաջ լուացված և սանտրած տղաներ և աղջիկներ խոստացած նուէրը ստանալու համար։

Ռուսիայի երկաթուղիների տարածութիւնը

20,744 վէրստ է, Ամէրիկայի Միացեալ Նահանգներում 150,000 վէրստ։

Ֆրանսացի Դիւպանլու եպիսկոպոսը, որ տաղանդաւոր բեմբասաց էր և նշանաւոր մանկավարժ, ասումէ. Առանց կարգի և եղանակի աշխատելը ժամանակ կորցնել է, ոչինչ անել է նշանակում։ Անպետան կարգով աշխատելը առաւել վնասակար է, վատ գործել է նշանակում։ Երբ մի կարգ կամ եղանակ լաւ չէ, որքան աւելի կհետևեն, այնքան աւելի կմոլորվին։

Փիլիսոփայութիւնը մանուկներին յարմար չէ. ամենալաւ սկզբնական գիրքը ուսուցչի ձայն է, որը փոփոխումէ դասերը և դասաւանդութեան եղանակը, նայելով նոցա կարիքներին, որոնց հետ խօսումէ։

Առաջարկվումէ հայկական դպրոցների կառավարիչներին հետևեալ կարևոր դիտողութիւնը։ Դպրոցում կարող է հրդեհ պատահել, կամ մի պատ քանդվել կամ այնպիսի անակնկալ դէպք, երբ աշակերտները պիտի շտապեն դուրս գալ դպրոցից։ Եթէ այս դէպքում աշակերտներ կշփոթվին և կխառնվին, կարող են վտանգին հանդիպել։ Սորա համար կարևոր է դպրոցի աշակերտներին վարժեցնել շաբաթ մի անգամ, ինչպէս լինումէ ամէրիկական դպրոցներում, հրդեհի աղաղակ բարձրացնելով, անմիջապէս և արագութեամբ և առանց շփոթվելու դատարկել սպառնացած շինու-

թիւնը։ Բաւական է, որ այսպիսի վարժութիւնները միանգամ ևեթ գործադրութիւն ստանան, նոցա խիստ օգտաւէտութիւնը գնահատելու համար։ Քանի մի օր առաջ Ամէրիկայում Ինդիանա նահանգի Տէրհօտի դպրոցում, № 4, վերին յարկում կրակ երևեցաւ։ Կրակը առաջինն տեսնումէ 12 ամեայ տղան, որը վաղուց նախապատրաստված լինելով այս տեսակ դէպքի համար իւր ուսուցիչների յանձնակի հրահանգներով, մի ըոպէ ևս խելք չկորցրեց։ Նա գնաց, պարզօրէն պատմեց գործը ուսուցչին, առանց որևէ երկիւղի աղաղակները բարձրացնելու, որոնք կարող էին սարսափ ձգել և վտանգ հասցնել դանազան դասարաններում գտնվող 500 աշակերտներին։ Նոյն անվրդով կերպով ուսուցիչը բօթային վարժութեան սովորական նշան տուեց, և աշակերտները ամենամեծ կարգով և քանի մի վայրկեանում դատարկեցին դըպրոցը, որը վտանգի մէջ էր արդէն. մի քառորդ ժամից յետոյ, դպրոցը բոլորովին կրակի ճարակ դարձաւ և հրդեհաշէջները դեռևս չէին հասել, որ դպրոցի տանիքը քանդվեցաւ և ծածկեց աշակերտական նստարանները։ Դպրոցին հասաւ 5000 դօլար (դօլ. 1 մ. 32 կ.) վնաս, բայց աշակերտները մնացին ողջ և առողջ։

Անգլիական Հնդկաստանում ժողովրդական լուսաւորութիւնը մեծ քայլերով առաջ է գնացել։ Այս խնդիրը քննելու նոր կարգած յանձնաժողովի զեկուցմամբ, 1882 թուին տեղական դպրոցների թիւը 25,150 էր, իսկ աշակերտներին 354,655։

Տէրութեան, հասարակութիւնների, քաղաքային վարչութիւնների հաշուով, նպաստներ ստացող դպրոցները թուով 82,916 էին 2,062,271 աշակերտներով։ Սկզբնական դպրոցների ուսուցիչների թիւը 66,552 էր, սոցանից 12,243 վկայական ունէին։ 106 մանկավարժանոցներ (ուսուցչական դպրոցներ) կան, որտեղ սովորումեն 3,886 ուսուցչացուներ, սոցանից 1593 երիտասարդներ 1882 թ. վկայականով աւարտեցին իրանց մակավարժական ուսումն և անմիջապէս ուսուցիչներ կարգվեցան։

Փոքրիկ Վարդ քաղաքում, Իտալանդիայի արևմտեան ափին, ապրումէ 15 ամեայ տղան, որ գերօրինակ ընդունակութիւնները ունի թուաբանութեան համար։ Նա լուծումէ քանի մի վայրկեանում բազմապատկման ամենադժուար խնդիրներ և մի ակնթարթում նա բազմապատկեց օրինակ 39 $^{3}/_{4}$-ը 789 $^{11}/_{45}$ ի վերա։ Տղայի անունն է Նիլսոն Բէրտիլսէն։ Նա տեղական նաւավարի որդի է։

Ասումեն թէ Անգլիայում վիստաբանութիւնը ամեն բանին հասցնումէ։ Ֆրանսիայում օրագրապետութիւնը ամեն երևելի պաշտօնների ասպարէզ է բանում։ Ամէրիկայի Միացեալ-Նահանգներում ընդհակառակն կարծես ուսուցչական համեստ կոչումն է պատիւների և բարձրագոյն դիրքերի իսկական ճանապարհ։ Ներկայումս պ. Բլէնը հասարակապետական ընտրելին է նախագահութիւն ուսուցիչ էր քանի մի միջոց խուլ-համրերի դպրո-

ցոցում։ Պ. Կլէվէլէն ժողովրդապետական ընտրելին ուսուցիչ է եղած կոյրերի մի դպրոցում։ Հանգուցեալ նախագահ Գարֆիլդը քանի մի տարի հասարակ դպրոցի ուսուցիչ էր։ Նորա նախորդներից շատերը միևնոյն պաշտօն են ունեցած։ Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Ամէրիկայի հասարակական հռչակված մարդիկները իրենց գործունէութեան ասպարէզը ուսուցչութեամբ։ Ուսուցիչներն այնքան մեծ նշանակութիւն ունին Ամէրիկայում, որ ուսուցչական ժողովներն այնտեղ մեծ նշանաւոր եղելութիւն են համարվում։ Մանկավարժների ժողովներին նոյնչափ ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ են նայում, ինչպէս դեսպանների և քաղաքագէտների ժողովներին Եվրոպայում։ Երկաթուղիները նշանակումեն յատուկ գնացքեր և շրջագայող ճանապարհորդութիւններ թէ գիշեալ գներով և թէ հրապուրիչ տեսարաններով։

Շնորհակալութեամբ ստացանք Նոր-Նախիջևանի Թեմական դպրանոցի տեսուչ մեծ. պ. Զարիխեանից նոյն դպրանոցի հոգաբարձութեան հաշիւ 1883—84 դպրոցական տարվան համար։ Դպրանոցի աշակերտների թիւը եղել է 216, ստացանից նոյն թուին արձակվել են դպրանոցից իրանց կամքով 25, վարչութեան որոշմամբ 18, բոլոր 43 աշակերտ (բարեկարգ դպրոցի համար վերջինը մեծ թիւ է)։

Այս աշակերտները գետեղված են 8 դասարաններում, որոնցից 3 հիմնական են մի զուգընթացով, և 3 նախակրթարան մի զուգընթացով։ Դպրոց-

բանոցն ունի 14 ուսուցիչներ և դաստիարակներ, որոնցից 9 հայազն են և 5 ռուսազն։

Դպրանոցի տարեկան մուտք եղել է. Թէոդոսիայի Խալիպ. դպրոցի վարձ 3000 ման., նախընթաց տարիներից աւելացած—8616 ման., տոկոսներ—562 ման. 52 կ., 158 վճարող աշակերտների ընդհ.—5019 ման. 65 կոպ., Խալիպեան դպրոցի մնացած գումարից—4080 ման., քաղաքային վարչութենից տարեկան նպաստ—6,875 ման. 37 կոպ., բոլոր թեմի եկեղեցիներից տարեկան նպաստ—3440 ման., նուէրներ 735 ման.=32,328 ման. 57 կոպ.։

Տարեկան ծախք եղել է. տեսչին ռոճիկ իւր 19 դասերով—3120 ման, բոլոր ուսուցիչներին—10,185 ման., 3 դաստիարակներին—1200 ման., 3 ծառաներին և պահապանին—444 ման. 50 կոպ., տընտեսական ծախք—825 ման. 68 կոպ., աշակերտական գրասեղաններ—595 ման. 50 կոպ., դրպրանոցի մէջ նորոգութիւն—519 ման. 45 կոպ., գործածվոր և հոգաբարձական խորհրդարան—544 ման. 42 կոպ., պիտոյք—467 ման. 90 կ., մատենադարանապետ—150 ման.=18,051 ման. 62 կ.։ Տարվան մէջ աւելացած է—14,276 ման. 95 կոպ.։

Շնորհակալութեամբ ստացանք պ. Շահբուդաղեանից իւր թարգմանած Անդէրսէնի Անդամալոյծ մանկական վէպիկը։ Ցանկալի կլինէր, որ պ. Շահբուդաղեանը. որ աշխատասիրութեամբ թարգմանութիւններ է անում, հայկական լեզուի մաքրութեանն աւելի ուշք դարձնէր. տնտղեցին, խօ, հէնց, պստլիկ և ուրիշ այսպիսի բառերը աւելորդ

է գործածել, երբ ցանկալի է որ մանուկները սոցա տեղ գործածել իմանան քննեցին կամ գնեցին, չէ որ կամ ոչ ապաքէն, նոյնիսկ, փոքրիկ բառերը։ Գրքոյկի գինը 15 կոպ. է, Թիֆլիսում, Ներսիսեան Ազգային-Հոգևոր դպրանոցում։

Հաստատ ապրիւրից ցնծութեամբ սրտի լսեցինք, որ համակրելի Մշակը անշուշտ կհրատարակվի յունվարից։

Անցեալ անգամ 7 և 8—№-ների «Թշուառ աղջիկ» ոտանաւորը մոռացմամբ ում որ չէր ուղարկվել, այժմ ենք ուղարկում։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։

Ղազար. Հոգաբ. Ա. Կ. Ստացանք Մանկավարժանոցին ուղարկած 3 ման.։ Շնորհակալութիւն ձեր բարեմաղթութիւնների համար։ Այդ Մանկավարժանոցին քաջալերութիւն է։

Պետերբուրգ. Յով. Յով. Խորին շնորհակալութեամբ ստացանք գիրքը։ Մանկավարժանոցը ուղարկվեցաւ։ Առաջին տեսրները չկան։ Հրաւիրում ենք դպրոցասէր ուսանողներին աշխատակցել մանկավարժական յօդուածներով։

Թիֆլիս. Հ. Ռ. Յայտնումենք ձեզ խորին շնորհակալութիւն ձեր համակրութեան համար առ մեր գործունէութիւնը։ Հաւատացէք անկեղծ խօսքիս, որ մեր աչքին մեր գործունէութիւնը աննշան է երևում մեզ, թէև հաճումէք մեզ անըս-

պառ. եռանդ և անշէջ կրակ անուանել, ինչպէս և մի ուրիշ բարեսիրտ բարեկամ Ալեքսանդրապոլից հաճել էր մեզ հուր և կեանք անուանել։ Միայն ուխտած ենք աշխատել անդադար յօգուտ հայկական եկեղեցու և դպրոցի քանի որ Տէրը կհաճի մեզ օր տալ։ Ս. Էջմիածնի Ճեմարանի մասին Մանկավարժանոցս ոչինչ չէ կարող ասել. տեղեկութիւններ չունինք։ Իրաւունք ունիք այդպէս ասելու, բայց մեղաւորը Էջմիածնում ներգործող հայրերը չեն, այլ մենք ենք, կամ աւելի լաւ ասեմ հանգամանքներն են. այնտեղ ներգործող հայրերը բարեհաճեցին առաջարկել մեզ Ճեմարանի մանկավարժութեան և պատմութեան դասատու լինել, բայց մենք անհնարին համարեցինք այս միջոցում Ճեմարանում պաշտօն յանձն առնել։

Վ. ա ն. Տ. Փ. Շատ ուրախ և շնորհակալ կլինի Մանկավարժանոցը, եթէ բարեհաճիք գոնէ երկու ամիս մի անգամ գրել ձեր քաղաքի և նահանգի դպրոցների և առհասարակ կրթական գործի դրութիւնը։

Կ. Պ o լ i s. Ա. Է. Ամենայն հեռաքրքրութեամբ սպասումենք ձեր նամակը Կ. Պոլսի դպրոցների մասին։ Գրեցէք նորոգ հաստատելի Ներսէսեան կեդրոնական վարժարանի հանգամանքները։ Զեզ Մանկավարժանոցը ուղարկվումէ Պատրիարքարան։

Խմբագրող-հրատարակող ԹՈՐԻՆ Ծ. ՎԱՐԴ. ՍՏԵՓԱՆԻ։

Дозволено ценз. Тифлисъ, 20 Декабря 1884 г.

Типографія И. Мартиросіана, Орб. ул. д. № 1 и 2.

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քաղաքական, բանաստեղծական և ազգային լրագիրը առաջինկայ 1885 թուականին կրկնապատկուած նոյն գիրքով և ծրագրով: Տարեկան գինը 10 ռ., կիսամեայ 5 ռ.: Հասցէն. Тифлисъ. Ред. „Мегу Айастани“.

Խմբ. Պ. Սիմէոնեան:

ՆՈՐ-ԴԱՐ

Քաղաքական-գրականական ամենօրեայ թերթը առաջինկայ 1885 թուականին կրկնապատկուած նոյն գիրքով և ծրագրով: Տարեկան գինն է 10 ռ., վեց ամսուան 6 ռ., չորսով 5 կոպ. Հասցէն. Тифлисъ Ред. „Норъ-Даръ“.

Խմբ.-Հրատ. Սպանդար Սպանդարեան:

ԱՐԱՐԱՏ

Գրականական, պատմական, բանաստեղծական և ազգային ամսագիր: տարեկան գինը Թուսիայում 4 ր.: Հասցէն. Св. Эчміадзинъ. Типогр. Комитетъ Տպարանական ժողով:

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակվում է շաբաթը երեք անգամ: Տարեկան գինն է Երևանում 1 ր.: Հասցէն. Эривань. Тип. Теръ-Григоранъ.

Խմբ.-Հրատ. Էմ. Տէր-Գրիգորեան:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱՆԱԿԱՆ ԹԵՐԹԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1885 ԹՈՒԻ ՀԱՄԱՐ (ՈՐ Է 4 ՏԱՐԵՇՐՋԱՆ)

Առողջապահական թերթը հրատարակվում է Երևանում, նախընթաց տարիների ծրագրով, տպագրվում ա. Էմին Տէր-Գրիգորեանի տպարանում:

Տարեկան գինն է 3 մեթ. ֆունտ վճարելի:

Սառրագրվել կարելի է խմբագրատանը: Օտար քաղաքացիները գիմումն հետևեալ հասցէով. Въ г. Эривань. Въ редакцію журнала „Гигіеническій листокъ“.

Խմբագիր-Հրատարակիչ բժ. Լևոն Տիգրանեան:

1885 թ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ ամսագիրը կհրատարակվի գլխաւորապէս մանկավարժական ուղղութեամբ։ Իւրաքանչիւր տեսրը երկու թերթից է։ Ցուլիս և օգոստոս ամիսներում չի հրատարակվի։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑԻ տարեկան գինն է 3 մանէթ։

Սատարագրվողները յատկապէս պիտի դիմեն այս հասցէով. Ахалцихъ. Редакціи Манкаваржаноцъ.

Մենք շատ հրաւիրեցինք հայ ուսուցիչներին ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑԻՆ աջակցելու, բայց գրեթէ ոչ ոք չլսեց մեր հրաւէրը։ Ուրեմն եթէ եկ՛ող տարի նոյն 50 բաժանորդ կունենանք, թող հայ ուսուցիչներին իրանց ղաղէլ խայթը չարչարէ թէ չեն կամենում ամենևին իրանց գլխաւոր պարտքերից մին հասկանալ և կատարել, և թէ մի անձնանուէր գործօնը աւելի կարօղանում է կատարել քան թէ բազմաթիւ հայ ուսուցիչներն։ Սա մեզ համար անտանելի ցաւ և վիշտ է, բայց ճշմարտութիւն է։

Խմբագրող-հրատարակող ԹՈՐԷՆ Ծ. ՎԱՐԴ. ՍՏԵՓԱՆԷ։

Համակեդրօնական Պրօգրամները (առաջին փորձ) աշակերտական կանոններով և դատարակների հրահանգներով հայկական հոգևոր ծխական և մինչնախարգ դպրոցների համար, վաճառվումեն Թիֆլիսում Կենդրօնական գրավաճառանոցում (Центральный Книжный магазинъ) և Զաք. Գրիգորեանի Կովկասեան Գրավաճառանոցում (Кавказская Книжная торговля З. Грикурова)։ Գրքոյկի գինն է 50 կ.։ Մանկավարժանոցի բաժանորդները ստանումեն պրօգրամների գրքոյկն ամսագրի յունվարի և փետրվարի տեսրների փոխարէն։

Մեզ խնդրումեն ծանուցանել հետևեալը. «Աքքերմանի հայկական հոգևոր դպրոցի ուսուցիչ Թ. Պալեանը կազմումէ թուաբանութեան ձեռնարկ ծխական և մինչնախարգ դպրոցների ուսուցիչների համար, փոխադրութեամբ, Եվտուշէվսկու մեթոդով և շուտով պատրաստ կլինի տպագրութեան համար»։